


Ա. Ի. ԼԱՎԼԻՆՍԿՈՎ

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ
ՅԵՎ
ՑԱՆՔԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ԴԵՐԸ
ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ԱՊԱՐԻՁՈՒՄ

ԱՐԴՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ԳԻՆ՝ 50 կգ
Цена 50
հոլ.

«ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՅԱ»

30 JUL 2010

Ա. Ի. ԼԱՎԼԻՆՍԿՈՎ

631.5

L-24

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՑԵՎ
ՑԱՆՔՍԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

ԶԵՐՆԱՐԿ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱԿՏԵՎԻ
ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմ. Վ. ԱՎԱԳՅԵԱՆ

1052



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. «ՀՅՈՒԽՈՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՐՅ

1933

1. Սոցիալիստական գաղտերի բարձր բերքի համար պայքարելը—նշանակում և պայքարել կուտահությունների կազմակերպչական-անտեսական հետազա ամրացման համար 3
2. Կազմակերպել բարձր բերք 10
3. Աշխանավարը բարձրացնում և գաղտնացան բույսերի բերքը 15
4. Աշխավարը պետք և կատարվի ժամանակին և լավ 17
5. Աշխանացան բույսերի համար ցեղերը կարեոր միջոց են հանդի-սանում բերքի բարձրացման գործում 19
6. Տեսակների նշանակությունը բերքատվության բարձրացման գործում 22
7. Ցանքսի ժամկետելով վճռում են բերքի հաջողությունը 25
8. Աշխանացան մշակույթների ցանքսի ժամկետը 29
9. Մերժացանի նորմաների մասին 35
10. Արտերի խնամքը նույնքան կարեոր ե, ինչքան ցանքսերինը 37
11. Ժամանակին կատարվող բերքահավաքը կանխում և կորուսաները 40
12. Պարարտացումը, մելիորացիան, ձյունակալումն—իսպաս բերքի 44
13. Ցանքսափոխությունը—ազրոտեխնիկայի կիրառման հիմքն ե 45
14. Բույսերի հերթականության հիմնական կանոնները 55
15. Նախորդողներն արդեք չպետք և լինեն աշխանացաններին 56
16. Ուր տեղափորել բազմամյա խոռերը 57
17. Ինչպես պետք և անցնել ընդունված ցանքսափոխությանը. 58



48904-65 (334/1)

От. редактор
В. К. Цояян
Тех. редактор
Г. М. Маркарьян

2931
Բс-64

Сдано в наб. 22/XII 1932 г.
Сдано в печ. 1/II 1933 г.
Объем 3 $\frac{3}{4}$ печ., листа
Гираж 2000 экз.

**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՅԵՐԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԵԼԸ
ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՑՆՏԵՍՎԱԿԱՆ ՀԵՏԱԳԱ ԱՄՐԱՑՄԱՆ
ՀԱՄԱՐ**

Բերքատվության բարձրացումը յերկրորդ հնգամյակում հանդի-սանում և սոցիալիստական հողագործության կենտրոնական խնդիրը: Մրա մասին կուսակցությունը ցուցումներ և տվել 17-րդ կուսկոնքերան-սի վորոշումների մեջ: «Ցերկուորդ հնգամյակի կենտրոնական խնդիրը պետք ել լինի կոլտնտեսային յեկ խորհինետեսային դաշտերի բերքատվարյան վիճական բարձրացումը յեկ յերաշի դեմ պայքարելու հարցի բոլոշվիկ-յան լուծումը»:

Ցանքսատարածությունների ընդլայնման ասպարիզում մենք վեթխարի հաջողություններ ձեռք բերինք: Մանր, անհատական ան-տեսությունն իվիճակի չեր ցել բարձրացնելու և անմշակ հողերը վարելու, նա չեր կարող իր տնտեսությունը վարել ազրոտեխնիկայի նվաճումների միջոցով: Մա հնարավոր դարձավ միայն կոլեկտիվ տն-տեսության պայմաններում:

«Կոլտնտեսային շարժման ուժեղ զարգացումից հետո, գյուղացի-ները հնարավորություն ունեն իրենց աշխատանքը միացնելու իրենց հարեանների աշխատանքին, միանալու կոլտնտեսության մեջ, ցել վարելու, ոգտագործելու անմշակ հողերը, ստանալու մեքենա և տրակ-տոր և այսպիսով բարձրացնելու իրենց աշխատանքի արտադրողակա-նությունը յեթե վոչ յեռակի, այլ գոնի կրկնակի չափով»: (Սատլին)

Կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը սրա մասին ասել է 1929 թվի վերջում (գեկտեմբերի 27-ին, ազրարնիկ—մարքսիստների կոնֆերանսում): Այդ ժամանակվանից հետո ցանքսատարածությունների աճը չտեսնված չափերի հասավ: Նախապատերազմյան ժամանա-կի հետ համեմատած՝ ԽՍՀՄ-ի ցանքսատարածությունը 30 միլիոն հեկտա-րով ավելացավ: Կուսակցության առաջնորդի ցուցումը, վորն արվել է

սրանից և տարի առաջ, ամբողջովին և լիովին հաստատվեց: Կոլտն-
տեսությունները, հենվելով խորհուտեսությունների և մեքենա-տրակ-
տորային կայանների վրա, կուսակցության ղեկավարությամբ, խոշո-
շագույն հաղթանակ՝ ձեռք բերեցին ցանքսատարածությունների ընդ-
լայնման ասպարիզում:

Կուսակցությունը կոլտնտեսային գյուղացիության առաջ այժմ
դնում է պատմական նշանակություն ունեցող խնդիր—սոցիալիստական
հաղագործության վորակի վճռական բարձրացման խնդիրը, վորոշ կարող
և լուծվել միայն այն դեպքում, յերբ անողոք պայքարը մղվի կուլա-
կության մնացորդների և ոպորտունիզմի դեմ յերկու ճակատում, ժա-
նավանդ աջերի դեմ, վորպես տվյալ ետապի գլխավոր վտանգի դեմ,
ճամփ ոպորտունիզմի և նրա հանդեպ ցույց տրվող հաշտվողական
վերաբերմունքի դեմ:

«Յեկել ե ժամանակը, յերբ ցանքսատարածությունների ընդլայն-
ման միջոցով տնտեսության ըստ լայնքի աճումից՝ պետք ե դառնալ
դեպի լավագույն մշակման պայքարին, բերքատվության բարձ-
րացման պայքարին, վորպես զարգացման տվյալ շրջանի գլխավոր
խնդիրը գյուղատնտեսության ասպարիզում»: (ԽՍՀՄ ժողկումնորհի
և կենտկոմի վորոշումից):

Մենք բոլոր հնարավորություններն ունենք նրա համար, վոր-
պեսզի մեր ուշագրությունը դարձնենք հողի լավագույն մշակման, բեր-
քատվության բարձրացման վրա: Հսկայական չափերով աճել են խորհ-
ունտեսություններն ու ՄՏՀ-ները, ԽՍՀՄ-ի գյուղատնտեսական գըլ-
խավոր ռայոններում ավարտված և հիմնականում համատարած կուկ-
տիվացումը և նրա հիման վրա կուլակության վերացումը, վորպես
դասակարգի: ԽՍՀՄ դարձավ ամենախոշոր սոցիալիստական հոգագոր-
ծության յերկիր:

Մեր արդյունաբերությունը, վորը հանդիսանում և սոցիալիզմի
հզոր հենարան, հնարավորություն ունի լիովին ապահովելու սոցիա-
լիստական հողագործության տեխնիկական սպառազինումը: Նա ապահո-
վում ե բանվոր դասակարգի կողմից կուտնտեսային գյուղացիությանը
ցույց տրվող արտադրական ոգնության հետագա ընդլայնումը: 100
հաղարից ավելի տրակտորներ, կցորդ ինվենտարով միասին, հազարավոր
կոմբայններ և սեփական հազարավոր ավտոմոբիլներ սպասարկում են
խորհուտեսություններին և կոլտնտեսություններին: Որական բաց են
թողոնում հարյուրավոր նոր արակտորներ, ավտոմոբիլներ և դանագան
գյուղատնտեսական գործիքներ:

Այսպիս, ուշեմ, բերքատվության բարձրացումը գնելով վորպես
կենտրոնական խնդիր, մասք ունենք այն կատարելու բոլոր պայման-
ները: Կոլտնտեսությունների կազմակերպչական անտեսական հե-

տագա ամրապնդման և բերքատվության բարձրացման համար պայ-
քարել չի կարող հաջողությամբ տարվել՝ առանց ագրուելինիկայի
լայն կիրառման սոցիալիստական հողագործության մեջ: Ագրոտեխնի-
կայի արհամարնում առաջ ե բերում ցածր բերք, վորպիսին վիճե-
ցնում և պետության հանգել ունեցած պարտավորությունների կա-
տարումը, պակասեցնում և կոլտնտեսությունների յեկամուտը, հե-
տեւարար և կոլտնտեսականի յեկամուտը:

Սակայն ագրոտեխնիկայի մասին յեղած խոսակցությունները
դատարկ խոսակցություններ են մնում այն դեպքում, յերբ բոլշևիկյան
պայքար չի տարվում կուլակության մնացորդների, սպիտակ գվարդիա-
կանության և նրա գործակալների քայլքայիշ աշխատանքի դեմ, վո-
րոնժ կատաղաբար փորձում են ներքուստ քայլքայել կոլտնտեսության
արտադրության և աշխատանքի կազմակերպումը:

Վորպեսզի ագրոտեխնիկան լայն մուտք գործի, զրահամար ամե-
նից առաջ պետք ե կոլտնտեսությունն ապահովված լինի տեղական
կուսկազմակերպության բոլշևիկյան ղեկավարությամբ, նրա գլուխը
կանգնած պետք ե լինեն փորձված, զյուղատնտեսության սոցիալիս-
տական վերափոխման համար անձնվեր մարտնչողներ: Կոլտնտեսա-
կանները մորթիկացիայի պետք ե յենթարկվեն դասակարգային թշնա-
մու դեմ անողոք կերպով պայքարելու համար:

Կուրանում կուլակության կողմից կազմակերպված ցանքսի և
հացամթերումների սարոտամբ պարզ կերպով ցույց ե տալիս, վոր
դաշտերի աղտոտվելը, ագրոտեխնիկական միջոցառումների դեմ պայ-
քարելը—հանդիսանում են հականեղափոխական կուլակային վնասա-
րացության անխղելի մասը:

Զախշախված կուլակության մնացորդները խցկվում են կոլտնտե-
սությունները, փորձում են նրան ներքուստ քայլքայել: Դասակար-
գային թշնամին այժմ բացե ի բաց չի պայքարում կոլտնտեսության
դեմ, բացե ի բաց աղիտացիա չի տանում կոլտնտեսությունից դուրս
գալու համար: Նա ներկայումս նախ և առաջ փորձում և վիճեցնել
կոլտնտեսության արտադրությունը, քայլքայել աշխատանքային կար-
գապահությունը, կազմակերպել կոլտնտեսային հացի հափշատկու-
թյունը և պետական առաջադրությունների վիճումը, կուլակը սողա-
կում և կոլտնտեսության զանազան ողակներում (հաշվագահ, պա-
հեստագետ, բրիգադիր, դաշտաբույժ, վարչության անդամ և այլն):
Նա փորձում է հրահրել և ոգտագործել կոլտնտեսականների մի մասի
մանր-սկիֆականատիբական և անհատապաշտական տրամադրություն-
ները և դրդում ե նրանց վիշացնել ինվենտարը, կոլտնտեսային գույքը
և ամեն կերպ աշխատում ե այնպիս անել վոր բերքատվությունը
պակասի և կոլտնտեսային դաշտերն աղտոտվեն: Այս վնասարարու-

թյունը հաջողվում է նրան այնտեղ, ուր կուսկազմակերպությունը կորցրել է իր զգոնությունը, գերի յե դարձել աշ ուղրոտունիստական տրամադրություններին, վորտեղ նրան ոգոնում են կուսակցության թշնամիները, վորոնք թագնվում են կուսակցական տումսերով: Իրենց զրաբաններում կուստում ունեցող այդպիսի թշնամիներն ամենավտանգավոր թշնամիներն են:

Կուլակության կազմակերպած սարոտաժը ջախչախելու միջոցով միայն հնարավոր և ապահովել ագրոտեխնիկայի իսկական լայն կիրառումը, սոցիալիստական դաշտերի բերքատվության բարձրացումը, հասարակական (սոցիալիստական) սեփականության ամրապնդումը և հետագա աճը:

Մեն՝ անխնա կերպով պատժում ենք կոլտնտեսային գույքը գողացողներին: Սակայն միթե ագրոտեխնիկայի կանոնները չկատարելու պատճառով չե, վոր կոլտնտեսությունները կորցնում են հարցուր և հազարավոր ցենտներ հաց: Հարյուրավոր հազար ցենտներ պակաս բերք հավաքելը նույնպես գողություն է համարվում:

Միանգամայն իրավացիորեն առաջավոր կոլտնտեսականները պահանջում են անխնա պայքար տանել հասարակական (սոցիալիստական) սեփականության հափշտակումի դեմ, վորն ագրոտեխնիկական միջոցառումները չկատարելու հետևանքն է:

Ազրոտեխնիկական միջոցառումների հիմքը ցանքսափոխությունն է: Առանց ցանքսափոխության չկա ազրոտեխնիկա:

Մշակույթների ճիշտ հերթափոխությունը վճռում է մոլախոտերի վոչչացման, սնկային հիվանդությունների, դաշտային վնասառուների քչացման խնդիրը: Հեանաբար, ցանքսափոխությունը ստցնելով և ազրոտեխնիկան լայն չափով կիրառելով, մենք լուծում ենք սոցիալիստական դաշտերի բերքատվության բարձրացման հիմնական խնդիրը: Ահա թե ինչու ԽՍՀՄ ժողկոմիսորնի և Համկոմկուսի (բ) հետակումի վորոշմամբ առաջարկված է.

«1933 թվի ընթացքում բոլոր կոլտնտեսություններում անցկացնել ցանքսափոխություն, վորայի բերքի բարձրացման լավագույն միջոցներից մեկը, այն հաւելով, վոր ցանքսափոխության կիրառումը կապված լինի վորությունը յեկ յերեամասուներում հացահատիկային հասկալոր մօակույթների ցանքսարածությունները համապատասխան չափով ընդարձակելու աժիատանիքի հետ»:

Ցանքսափոխության ճիշտ կիրառումը հատկապես նպաստում է կայուն հօգոսագործում ստեղծելու վերաբերյալ կուսակցության և կառավարության միջոցառումների անցկացմանը:

ԽՍՀՄ կենտրոնակումի և ժողկոմիսորնի 1932 թվի հոկտեմբերի 3-ի վորոշման համաձայն յուրաքանչյուր կոլտնտեսության ամրացվում է այն

հոդը, վորը գտնվում է նրա նգտագործման տակ ներկայում գոյություն ունեցող սահմանեներում յեկ սրա հետ միասին արգելված են ամեն ենակի վերափոխումները: Այս վորոշումը տնտեսական-քաղաքական խոսակի վերափոխումները: Այս վորոշումը տնտեսական-քաղաքական խոսակի վերափոխումները: Այս վորոշումը կուսակցության նոր նշանակություն ունի: Արգելելով վորեւ վերափոխումը, կուսակցությունն ու կառավարությունը յուրաքանչյուր կոլտնտեսության համար համարավորություն ստեղծեցին հաջողությամբ կիրառելու ցանքսափոխությունը:

Մեր յերկրամասի պայմաններում ցանքսափոխություն մտցնելը հեշտանում է նրանով, վոր ույոնների մեծ մասում հողաշինարարական աշխատանքներն անց են կացված նշանակված հարյուր հեկտարանոց և չորս հարյուր հեկտարանոց վանդակների հողատարածություններում:

Յեկ վորոշիետես ցանքսափոխությունն ագրոտեխնիկայի հիմնական ողակն է հանդիսանում, վիթիարի նշանակություն ունի կոլտնտեսությունների հետագա տնտեսական-կազմակերպչական ամրապնդման և կոլտնտեսականների նյութական կենցաղային մակարդակի հետագա բարձրացման գործում, այդիսկ պատճառով զասակարգային թշշնամին փորձում ե վիճեցնել ցանքսափոխության կիրառումը, վորպես մոլախոտերի դեմ պայքարելու լավագույն միջոց:

Հնկ, Շերողանը Պոլտավսկայա ստանիցայի որինակով ցույց տվեց, թե ինչպես կուլակությունը կոլտնտեսությունների կողմից պետության պարտավորությունները կատարելու զեմ մղած իր պայքարը զուգակցում է ազրոտեխնիկական միջոցառումներին դիմադրելու հետ:

«Պոլտավսկայա ստանիցայի որինակը, — ասում է ընկ, Շերողալեվի պարտեղ այժմ ցանքված է աշնանացանի պլանի միայն 30 տոկոսը. վորտեղ անցյալ տարի դաշտերը, կուռանի պատղարեր դաշտերը աղտոտվել են մարդու հասակի յերկարությամբ մոլախոտերով, վորտեղ մոտավորապես բոլոր ցանքսատարածությունների կեսը փչացած է համարվում, վորտեղ մի հեկտարից հացամթերման համար հանձնված է 1—1½ փութ, պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչպես կուլակը սարոտած է կազմակերպում:

«Վորովիկետն զա նշանակում է, վոր մենատնտեսները և կոլտնտեսականներն անցյալ տարի այս ստանիցայում աշնանացանի ժամանակ հողը պետքին պես չվարեցին, ձգձգեցին ցանքսը, սերմացույի մի մասը գողացան և չցանցեցին, այնուհետև ամուսնը դաշտերը չքաղիանեցին, վատ հավաքեցին բերքը, այսինքն չաշխատեցին, կամ, լավագույն դեպքում ցույց եյին տալիս, վոր իր թե աշխատում են»:

Թե ինչպես գասակարգային թշնամին, ոգտագործելով կոլտնտեսականների մի մասի սանր-սեփականատիրական մնացորդները, ուշ-

Խատում և վիժեցնել ցանքսափոխությունը, յերկում և հետեւալ որինակներից:

Վերցնենք շարքահերկ տեխնիկական բույսերի բերքահավաքը: Այս բույսերն իրենցից հետո ազատում են հողը աշնանացան հասկավոր բույսերի համար: Յեզիպտացորենի, արևածաղկի բերքահավաքը կուբանում հանդիպեց կուլակության կողմից կաղմակերպված սարուտաժի:

Դասակարգային թշնամու ծրագիրն այսպիս է. քանի վոր շարքահերկերի բերքահավաքը վիժեց, ապա պարզ է, վոր կոլտնտեսությունը աշնանաբույսերը պետք է ցանի խողանում: Այս վերջի վերջու շարքահերկերի ուշ բերքահավաքի հետ միասին վիժում և նաև ցանքսափոխությունը:

Մի ուրիշ որինակ: Ցանքսափոխությունը պետք է սահմանվի պետության կողմից ցանքսափառածություն և մշակույթների վերաբերյալ կոլտնտեսությանը տրված առաջադրանքին համապատասխան:

Յեզ ահա Նեվինոմինսկի ուայոնի Կալինինի անվան կոլտնտեսության սեղ, ցանքսափոխությունը մշակելիս կուլակության մնացորդները, տեսնելով, վոր իրենց չի հաջողվում մշակույթների հերթափոխությունը վիժեցնել, այն ժամանակ փորձեցին «իրենց» ցանքսափոխությունն անցկացնել:

Ինչպես հացամթերումներում դասակարգային թշնամին փորձում և կոլտնտեսությունների շահերը հակադրել համապետական շահերին, ճիշտ այնպիս ել այստեղ նա փորձեց ցանքսափոխության մեջ քաշել այնպիսի մշակույթներ, վորոնք չեն նախատեսված պետության արտադրական առաջադրանքով: Սա կրանտեսությունը սոցիալիստական տնտեսության պլանային սիստեմից հեռացնելու փորձ է յեղիք:

Հնդամյա պլանի հիման վրա պրոլետարական պետությունը յուրաքանչյուր տարվա համար կազմում է յերկրի վողջ տնտեսության դարգացման հոկիչ թվեր և նրանք հասցնում են յերկրամասերին և մարդերին: Այսուհետև հոկիչ թվերը հասցում են յուրաքանչյուր ուայոնի կոլտնտեսություններին, վորպես արտադրական առաջադրանք:

Կոլտնտեսության կողմից ստացված արտադրական առաջադրանքի ցույց և տրվում, թէ կոլտնտեսությունը քանի և ինչպիսի մշակույթներ պիտի ցանի: Ցանքսափոխություն կազմակերպելիս յետքետ պիտի ունենալ ահա այս առաջադրանքը:

Այն սաբոտաժը, վորը կազմակերպեց կուլակությունը կուբանում, ցույց և տալիս, վոր դասակարգային թշնամին փորձում և ողտագործել ամեն մի ճեղքագծք, կոլտնտեսային արտադրության ամեն մի թույլ ողակ, վորպեսի ներքուստ քայլքայի այն: Մեր այսպիսի թույլ ողակներից մեկը հանդիսանում է այն, վոր կոլտնտեսականների գդա-

լի մասը բավականաչափ չի տիրապետել ագրոտեխնիկային: Դասակարգային թշնամին ոգտվում է այս հանգամանքից:

Թուրագանչյուր կոլտնտեսական-ակտիվիստ պետք է զիտենա, թէ ինչպես պետք է պայքարել սոցիալիստական հողագործության ագրոտեխնիկայի համար, ինչպես կատարել կուսակցության վորոշումը բերքի բարձրացման մասին: Այս ձեռնարկի նպատակն է այս գործում ոգնություն ցույց տալ կոլտնտեսային ակտիվին:

Ցանքսափոխության կիրառումը հանդիսանում է ագրոտեխնիկայի զարգացման, սոցիալիստական հողագործության բերքատվության բարձրացման հիմք: Սա դասակարգային պայքարի հարց է:

«Եերբ դուք տեսնում եք կոլտնտեսականի ագրարակը, ասել ե ընկ-ծերողայիվը,—իսկեւլ աչքի յե զարնված, թե ինչպես երա անհատական բանջարանոցը երաշուի կերպով մօակիված է, իսկ կուտեսային դաշտերը հանաւ խայտուակ վիճակումն են գտնվում: Մի՞ք թե պարզ չեա բոլորի դասակարգային իմաստը: Մի՞ք թե պարզ չե, վոր կուտեսականների բարեխիղն յեկ արդյունավետ աշխատավետի ներառությունում պայմանական աշխատավարդների անոնած յեկ կուտեսային օբնարարայիշան վիճեցում կազմակերպել»:

Ագրոտեխնիկայի կիրառման համար տարբիող պայքարը սերտութեան կապված է կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման պայքարի հետ, կոլտնտեսականների մեջ հասարակական սեփականության հանդեպ սոցիալիստական վերաբերմունք դաստիարակելու համար կուլակության մնացորդների, կուլակային աղդեցության դեմ պայքարելու հետ:

ՄՏԿ-ները խոշոր և պատասխանատու աշխատանք պետք է կատարեն: Նրանց վրա կուսակցությունը և կառավարությունը դրեց խոդիր—«դաստիարակությունների դեկալարային տեխնիկան կուտեսությունների դեկալարային տեխնիկան կուտեսությունների վերաբերությունում պայտագումը»:

Սա նշանակում է, վոր ՄՏԿ-ները պետք է գառնան դեկալարող կենտրոններ և ազրոտեխնիկական դիտելիքները, ազրոկուլուրան և հողամշակումը կոլտնտեսային լայն մասսաների մեջ տարածողներ:

Մեենա-տակարույին կայանների դերը, վորպես այս աշխատանքի հենակետեր, Անրիա ժամանակամիջոցում առանձնահատուկ նօանակուրյան և ձեռն կուլություն կուսակցական կազմակերպությունները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն մեքենատրակտորային կայանների ուժեղացման վրա՝ վորպես տեխնիկական և քաղաքական կազմակերպություններ, Միայն ՄՏԿ-ների դերն ու ազդեցությունն ուժեղացնելու միջոցով է, վոր մենք կկարողանանք ձեռք բերել նոր փայլուն հաջողություններ կոլտնտեսականների գդա-

Մեքենատրակտորային կայանները կոլտնտեսություններում պետք ե կազմակերպեն ազրոտեխնիկայի կիրառման գործը, համառ բոլցելիկայն պայքար պետք ե տանեն կոլտնտեսային դաշտերի բերքատվության բարձրացման, ճիշտ ցանքսափոխություն մացնելու համար, վորն ապահովում ե հացահատիկային և տեխնիկական մշակույթների բերքատվության աճման արագ տեմպերը:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԲԱՐՁՐ ԲԵՐՔ

Մեր բերքի հիմնական չարիքը մոլախոտերն են, Մոլախոտերն ամենուրեք 20—40 տոկոսով իջեցնում են բոլոր բույսերի բերքը Տասնյակ միլիոնավոր ցենտներ պակաս հացահատիկ ենք հավաքում լոկ այն պատճառով, վոր կոլտնտեսային և խորհտնտեսային դաշտերը մոլախոտերով ծածկված են լինում: Վոչ խոնավությունը և վոչ ել յերաշտը չեն խանգարում մոլախոտերին մնամելու մեր դաշտերը: Բույսերի մնամատուները և հիվանդությունները նույնպես մնամում են բերքին և պակասեցնում բերքահավաքը:

Բացի հողագործության այս հիմնական և ընդհանուր թշնամիներից, չորային ուայոններում, վորտեղ քիչ անձրև և ձյուն ե գալիս—մի տարում մինչեւ 400 մմ և վորտեղ այս մթնոլորտային տեղումները կայուն չեն (անհավասարաչափ են տեղում), բերքը վորոշ տարիներում չափազանց իջնում ե, վորովհետև խոնավությունն անբավարար է լինում:

Կրապոտկին—Նեվինոմինսկայա—Հանքային ջրեր—Պրոխադնայա գծից դեպի արեւելք և Կրապոտկին—Կանևսկայա գծից դեպի հյուսիս ձգվող յերկրամասի բոլոր ուայոնները, ինչպես նաև Մերձակովի ուայոնները (Տեմրյուկի և մասամբ Մերձակովյան Ախտարսկի) պատկանում են այն գոտուն, ուր յերաշտը և չոր քամիները հաճախ կարևորագույն բույսերի քիչ բերք տալուն պատճառ են դառնում, իսկ մի քանի տարիներում այնպիսի մշակույթների բերքը, վորպիսին են դարձնացունը, գարին, այստեղ չափազանց իջնում ե, սակայն ազրոտեխնիկան դիտե և սովորեցնում ե, թե ինչպես պետք ե վերացնել ցածը բերքերի պատճառները:

Առաջին հնդամյակի ընթացքում մեր յերկրում ստեղծված ե տրակտորաշինարարության և գյուղատնտեսական մեքենաշինարարության սեփական ուժեղ բաղա, վորը յերկրորդ հնդամյակում ապահովուու յերգյուղատնտեսության բոլոր կարելորագույն աշխատանքների մեքենայացումը:

Ստալինը գրադի և Խարկովի գործարաններն ամեն որ նոր տրակտորներով զինում են խորհտնտեսությունները և կոլտնտեսություննե-

րը (որական արտադրելով մինչեւ 250 տրակտոր): Մեքենաշինարարության գործարաններն ամեն որ բարձրացնում են շարքացան մեքենաների, արակտորային գութանների, կոմբայնների արտադրությունը Մոսկվայի և Նիժնիգորոդի գործարաններն որական բաց են թողում հարյուրից ավելի ավտոմեքենաներ: Գործարանները և ֆաբրիկները տալիս են այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են սոցիալիստական հողագործությունն իսկապես զինելու՝ հանուն բերքի համար մղվող պայքարում:

Համկոմկուսի (թ) Հյուսիսային կովկասի Յերկրկոմի, Յերկրգործկոմի և Յերկրկոլտնտմիության վորոշմաբ, 1932 թվին բերքահավաքի կամպանիայի համար յերկրամասում կազմակերպված են ՍՏԿ-ներ 15—20 հազար հեկտար տարածություն ընդգրկող բոլոր խոշոր գյուղերում և ՄՏԿ պարկում մտցված ե 700 կոմբայն, 1300 ավտոմեքենա և 250 պիկկեր (յեգիպտացորեն հավաքող մեքենա):

Կառուցվում են քիմիական պարարտանյութեր պատրաստող գործարաններ, ավելացվում ե պարարտանյութերի արտադրությունը: Հողագործությունը զիտական հողի վրա դնելու համար Խորհրդային Միության մեջ ստեղծված են բոլոր միջոցներն ու պայմանները:

Սրա հետ միասին, ուսումնական հիմնարկները, տեխնիկումները, դաշտագործությունները և դասընթացքները կոլտնտեսականներից և խորհտնտեսային բանվորներից բաց են թողնում հազարավոր և տասնյակ հազար բավոր խոշոր սոցիալիստական հողագործության հրամանատարներ, վորոնք կոլտնտեսություններն ու խորհտնտեսություններն են վերադարձնում, բերելով իրենց հետ գիտական հողագործության գիտելիքները:

Հողագործության տեխնիկայի այս արագ առաջնապես գյուղատնտեսների, խորհտնտեսային բանվորների և կոլտնտեսականների վորձի աճումը և կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրապնդման հաջողությունները վերացնում են բերքի բարձրացման խոշնդոտները: Այն, ինչ չափազանց դժվար խոնդիր եր հանդիսանում մանր անհատական գյուղացու համար, կուսակցության դեկավարությամբ դա միանդամայն գործնականապես իրադրելի խոնդիր ե հանդիսանում խոշոր սոցիալիստական հողագործության համար, վորը զինված ե նոր տեխնիկայով, հողագործության գիտելիքներով և վորը վայելում ե բանվոր դասակարգի և նրա կուսակցության աջակցությունը: Կարեն ծամանակամիջոցում բարձրացնել բերքը, մոռանալ ցածը բերքը յեվ անբերերիությունը — անայն մարտական խնդիրը, վորը դրվագ ե յուրաքանչյուր խորհության լեվ կոլտնտեսության առաջ:

Սակայն դործնականում յերկրամասի շատ կոլտնտեսություններ, մանավանդ կուբանում, չոպտագործեցին խոշոր սոցիալիստական տնտեսությա հսկայական առավելությունները:

Առանձնապես մեծ են բերքի կորուստները կուբանում 1932 թվին, ըստ վորում այստեղ դրա պատճառը վոչ թէ բնության տարերային ուժերն են յեղել, այլ կուլակության մնացորդների և սպիտակ դվարդիականների խորհրդային իշխանության միջոցառումների հանդեպ կազմակերպած սարոտաժը: Այս սաբոտաժն ե յեղել պատճառը, վոր ցանքսը, քաղանը, բերքահավաքը և հացամթերումներն ուշացան: Կուլակության կազմակերպած սարոտաժն ուշ բերքահավաքի, դիզման, ուշ և վատ կալման, վորը ձգձգից մինչև ձմեռը, յեզիդատացորենի և այլ մշակույթների ուշ և անփույթ բերքահավաքան պատճառ ե յեղել: Այս սարոտաժը պատճառ յեղավ հողի խայտառակ մշակման, վորը չափազանց իջեցրեց բերքը:

«Դուք դիտեք, վոր մենք ուշացրինք ցանքսը, քաղանը և բերքահավաքը: Աշխատանքների մի մասը բոլորովին չենք կատարում: Սա նրանից ե, վոր կոլտնտեսականների մի մասը, ամբողջ կոյտնտեսություններն այնպես չեն աշխատում, ինչպես պետքն ե և ինչպես պետք և պահանջել, վոր աշխատեն խոշոր, տեխնիկապես դինված տնտեսությունները»: (Եերոլդայեվի ճառից, արտասանված 1932 թ. նոյեմբերի 12-ին):

Դասակարգային թշնամու դեմ անողոքաբար պայքարելը, աշխատանքային կարգապահության բարձրացումը և աշխատանքի հանդեպ դիտակից վերաբերմունք ցույց տալը հանդիսանում ե կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման զլիսավոր պայմաններից մեկը և հողագործության գիտական ձեվերի մուծման հիմքը:

Աներածեա և դաշտերը հավասարեցնել լավագույն հողամասերին, լավագույն կոլտնտեսությունների յեվ բբիգաղների հողամասերին:

Ի՞նչ ե նշանակում սա: Սա նշանակում ե, վոր խորհուտեսությունների ու կոլտնտեսությունների բոլոր դաշտերը պետք և մշակվեն այնպես, ինչպես այն լավագույն հողամասերը, վորտեղ կիրաված են հողագործության գիտական ձեվերը, վորտեղ վերացված են դիմադրկությունն ու հավասարեցումը, վորտեղ ճիշտ ե կազմակերպված աշխատանքը, մոցված և գործավարձը, վորտեղ լայն չափով տարածվել և սոցմրցումն ու հարվածայնությունը: Սա նշանակում ե, վոր յուրաքանչյուր բրիգադ աշխատանքը պետք և կազմակերպի այնպես, ինչպես այդ անում են յերկրամասի իրար հետ մրցակցող 250 լավագույն բրիգադների որինակին, պետք և յուրացնել բույսերի մշակման բոլոր լավագույն ձեվերը և դիմադրկությունն ու հավասարեցումը վերացնելու, կուլակային մնացորդների վնասարարության դեմ անողոք պայքար մղելու հիման վրա այնպես առաջնարարություն կտա ահազին քանակությամբ բերք հավաքելու:

Սովորական յերեկույթի ե, յերք կոլտնտեսության լավագույն հողամասերը 5—6 անգամ ավելի շատ բերք են տվել քան վատերը: Որինակ՝ թյուլիսերի անվան կոլտնտեսության մեջ (Կըապոտկինի ույոն), աշնանացորենը արոտավայրի լավագույն հողամասերում տվել ե 18 ցենտներ, նախորդող շարքահերկ բույսերի հողամասերում 7—9 ցենտներ, իսկ վատ հողամասերում, խոզանում ցանելիս, տվել ե ընդամենը 5—6 ցենտներ: «Հոկտեմբեր» կոլտնտեսության մեջ (Կորենովսկու ույոնի վիսելիկի գյուղում) լավագույն հողամասերը աշնանացորենը տվել են մոտ 10 ցենտներ, իսկ վատ հողամասերը՝ 2 ցենտներ: Տիխորեցկու հացահատիկային խորհուտեսության մեջ ցորենը յերկար ժամանակ անվար մնացած հողում տվել ե 1 հեկտարից 10 ցենտներ, իսկ արեվածաղկի հողում—մինչև 2 ցենտներ 1 հեկտարից:

Կարող են կարծել, վոր բերքի այս աստիճան խիստ տարբերությունը բացատրվում է հողամասերի տարբեր վորակներով: Սակայն դա այդպես չե: Հազվագյուտ դեպքերուն ե, վոր մի խորհուտեսության ու կոլտնտեսության հողամասերը վորակով խիստ տարբերվում են իրարից: Սովորաբար մի կոլտնտեսության հողամասերը վորակի տեսակետից քիչ են տարբերվում իրարից:

Բերքի այս հսկայական տարբերությունը բացատրվում է գլխավորապես հողամասերի տարբեր մշակությամբ, բույսերի տարբեր խընամքով, աշխատանքի կազմակերպման և գրութիւն հանդեպ ցույց տրվող տարբեր վերաբերմունքով:

Այսպիսի տարբերությունն առաջին հերթին բացատրվում է նըրանով, վոր հողամասերից մի քանիսում զեկավարել և աշխատել են այնպիսի մարդիկ, վորոնք նվիրված են գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործին, իսկ մի քանիսում աշխատել և զեկավարել են այնպիսի մարդիկ, վորոնք ընկել են կուլակային աղցցության տակ, վորոնք աջակցել են կուլակության կողմից կազմակերպված սաբոտաժին և իջենք դարձել նրա կազմակերպիչները:

Դնել բոլոր դաշտերի բերքը լավագույն հողամասերի բերքին հավասարացնելու խորհրդը—նշանակում ե կիրառել այն ամենը, ինչ կիրառվել ե լավագույն հողամասում, սա նշանակում ե կիրառել հայտնի, արդեն նվաճած ձեվերը:

Սակայն միայն սրա վրա չպետք ե կանգ առնել: Հետեվելով խորհուտեսությունների լովագույն հողամասերի և կոլտնտեսությունների 250 լավագույն բրիգադների որինակին, պետք և յուրացնել բույսերի մշակման բոլոր լավագույն ձեվերը և դիմադրկությունն ու հավասարեցումը վերացնելու, կուլակային մնացորդների վնասարարության դեմ անողոք պայքար մղելու հիման վրա այնպես առաջնարարություն կտա ահազին քանակությամբ բերք հավաքելու:

**ԱՇԽԱՎԱՐԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Ե ԳԱՐԱՆԱՑԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ
ԲԵՐՔԸ**

Հայտնի յեւ, վոր գարնանացան մշակույթները բարձր են տալիս աշխանավարի շնորհիվ: Հայտնի յեւ, վոր գարնանավարը, անկասկած, իջեցնում ե բերքը: Այս ցույց են տալիս փորձակայանների հետեւյալ բազմամյա հետազոտությունները:

Սակայն չորային ռայոններում շատ անգամ սիայն ագրոտեխնիկան, առանց վոռոգման, չի կարող անվնաս դարձնել յերաշտը: Չորային ռայոններում վոռոգումն առանձնապես մեծ նշանակություն ունի բանջարանոցային բույսերի, այդինքն և՝ այնպիսի դաշտային մշակույթների համար, ինչպիսին ե գետնախնձորը:

Անբերբի կամ սննդարար նյութերով աղքատ հողերի համար պարարտացումը հսկայական նշանակություն ունի: Մեր յերկրամասում հողերի մեծ մասն առայժմ դեռ բավականաչափ արդավանդ ե, սակայն բանջարանոցային, այդու և տեխնիկական արժեքավոր մշակույթների համար պարարտացումը վիթխալի նշանակություն ունի նաև մեր յերկրամասում: Պարարտացումն առանձնապես խոչըր նշանակություն ունի նախալեռնային գոտու վողողվոզ հողերի համար, վորտեղ դաշտը զառիվայրի վրա յեն գտնվում: Զառիվայր հողերը սովորաբար աղքատ են լինում հանքային աղերից, վորոնք անհրաժեշտ են բույսերի սննդառության համար: Սակայն, այս զրգում խոսելու յենք զիսավորապես ազրոտեխնիկայի մասին, վորն ամենուրեք և բոլոր բույսերի նկատմամբ վճռական նշանակություն ունի՝ բարձր բերք ստանալու համար,

Ազրաելինիկայի հիմնական ծեմերն են—հողականություն, բաւյսերի հերքափախուրյունը, տեսակավոր սերմացանը, ցանկը ժամանակին կատարելը, բույսերի ժամանակին յեկ նիւթ խնամքը, բերքահավաքը ժամանակին յեկ առանց կորսիֆ կատարելը:

Վերոհիշյալ բոլոր յեղանակների կիրառումը հնարավորություն կտա լավ բերք ստանալու տակ պայմանով, վոր միևնույն ժամանակ անողոք պայքար տարվի կուլակային դիմադրության և սարոտաժի դեմ, ճիշտ կազմակերպվի աշխատանքը, վերացվի դիմագրկությունը և բարձրացվի աշխատանքի կարգապահությունը:

Բերքի համար տարվող պայքարում ազրոտեխնիկայի զանազան միջոցառումները միևնույն նշանակությունը չունեն: Այժմ կարգով քննության առնենք ազրոտեխնիկայի հիմնական միջոցառումները:

Դոնեցի գործնական կայան	Դոնեցի գործնական կայան
Աշխանավարս 6,4	9,4
Գարնանավարով 5,2	7,3

Աշխանավարը 1—2 ցենտներով ավելացնում ե ցորենի բերքը 1 հեկտարից: Վաղահաս գարնանացորենի և զարու, ինչպես նաև արևածաղկի և ճակնդեղի համար աշխանավարը վճռական նշանակություն ունի, վորովհետեւ նա ապահովում է ժամանակին ցանքսը, վորն առանձնապես կարեվոր և տվյալ մշակույթների համար: Միթե ամեն մի կոլտնտեսության մեջ չի կարելի պարզ կերպով տեսնել թե ինչպես աշխանավարի վրա ցանված բոլոր գարնանացան բույսերը (հացահատիկային և շարքահերկ) տարբերվում են իրենց լավ բերքով: Միթե աշխանավարի վրա ցանված գարնանացան բույսերն ավելի մաքուր, ավելի խիտ և ավելի հավասարաչափ չեն աճեն քան այն գարնանացան բույսերը, վորոնք «գարնանավարի» վրա յեն ցանված: Հենց այդպես ոլ յեղել ե թե խորհանտեսություններում և թե կոլտնտեսություններում—գարնանացան բույսերի լավագույն հոգամասերը գտնվում են աշխանը վարած ցանքսատարածությունների վրա: Աշխանավարը, շուր տալով հողի մակերեսը, թույլ ե տալիս, վորպեսզի մոլախոտերի սերմերը ծիեն, խկ զրանով մոլախոտերը ձըմեռվա սառնամանիքներով և գարնանը կատարվող նախացանքային հողամշակմամբ վոչնչանում են: Հողաշերտերի շուր տալը շատ զիսավորություն է հանում հողի մակերեսի վրա, վորտեղ նրանք վոչնչանում են արևից, անձրեվից, վատ յեղանակից, ինչպես նաև թրոշուներից—հողագործության բարեկամներից: Վնասատուներից վոմանք, խոզանի հետ միասին հերկվերով, ընկնում են հողի խորունկ շերտերը և այստեղ վոչնչանում են: Աշխանավարը նպաստում է խոնավության պահպանմանը և կուտակմանը: Աշխանավարը, նպաստերով մոլախոտերի և զիսավորությունների վոչնչացմանը և ապահովելով խոնավության կուտա-

կումը, վճռում ե գարնանացան բույսերի համար լավ մշտկված հող նախապատրաստելու հարցերը:

Աշնանավարը պետք է լինի գարնանացան բույսերի բերքը բարձրացնող հիմնական միջոցառումը՝ զենց դրա համար ե, վոր Յերկրգործկոմի հիմքերորդ պլենումն իր «աշնանացան կամպանիայի» և բերքատվության բարձրացման միջոցառումների մասին» կայացրած վորոշման մեջ մատնանշել ե. «Նկատի ունենալով վոր աշնանավարը մոլախոտերի դեմ պայքարելու լավագույն միջոցն ե և ապահովում ե գարնանային բույսերի վաղ ցանքսը, պարտավորացնել տեղական կազմակերպություններին, աշնանացանը սահմանված ժամկետում անցկացնելու հետ միասին, լիովին. կատարել նաև աշնանավարի պլանը»:

Արդյոք ամեն տեղ կոլտնտեսություններն ու խորհնտեսությունները կիրառել են աշնանավարը: Արդյոք 1933 թվի բոլոր գարնանացան տարածություններն են ապահովված աշնանավարով: Վոչ, մենք այդ չենք տեսնում, մանավանդ կուբանի ուայոններում: Հնգամյակի ավարտական տարում դաշտերի մեծ մասը չի նախապատրաստվել գարնան համար, ինչպես այդ պահանջում ե սոցիալիստական բերքը: Բայ վորում, աշնանավարի անհաջողությունը բացատրվում ե նըռանով, վոր թերազնահատել են աշնանավարի նշանակությունը, կուրակային տարբերը աշնանավարը վիճեցնելու նպատակով ուղղակի հականեղափոխական աշխատանք են կատարել հետամնաց կոլտնտեսություններում:

Սա պարզուեն յերեվում ե նրանից, վոր մի քանի կոլտնտեսություններ լրիվ կատարել են աշնանավարի պլանը, մինչեւ հարեվան կոլտնտեսությունները հենց նույն պայմաններում և արտադրության միևնույն միջոցներով գլուխ չեն բերել այս կարելորագույն կամպանիան:

Պոլտավսկայա ստանիցայի որինակը, վորի բնակիչները Յերկրկոմի վորոշման համաձայն աքսորվել են յերկրամասի սահմաններից՝ խորհրդային իշխանության բոլոր միջոցառումները սարոտածի յենթարկելու պատճառով, ցույց ե տալիս թե ինչքան մեծ ե իր վերջին բովեններն ապրող դասակարգի դիմադրությունը: Աշնանացանի պլանը Պոլտավսկայա ստանիցայում կատարված ե միայն 41 տոկոսով, իսկ աշնանավարն՝ ընդամենը 11 տոկոսով:

Պոլտավսկայա ստանիցայում տիրող այս դրությունը բացատրվում ե նրանով, վոր այս ստանիցայի կոլտնտեսականներն ու անհատականները գասակարգային թշնամու ցուցմունքներով պարագուային կյանք եյին վարում, զբաղվում եյին մասարարությամբ, կուտնտեսային հացի գողությամբ, և խորհրդային իշխանության բոլոր տնտեսական միջոցառումները վիճեցներով: Դրա համար ել բոլորովին

ճիշտ ե կուսակցության Յերկրկոմի և Յերկրգործկոմի միջոցառումը, վորոնք վրոշեցին աքսորվել այս ստանիցայի բնակիչներին յերկրամասի սահմաններից, վարպետ պարագաների, վորոնք արժանի չեն ողովելու կուբանի հարուստ սեփահողերից:

ԱՇԽԱՆԱՎԱՐԸ ՊԵՏ Ե ԿԱՏԱՐՎԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԵՎ ԼԱՎ

Բավական չե միայն, վոր աշնանավարը հողի նախապատրաստության պարտագիր յեղանակը պիտի հանդիսանա: Խորհնտնտեսություններում և կոլտնտեսություններում աշնանավարը պետք ե կատարվի ժամանակին: Արեվելյան չորային ուայոններում ուշ աշնանավարը վորչնով չի տարբերվում գարնանավարից: Աշնանավարի ուշացնելն առ ուղ ե բերում մեծ քանակությամբ հացահատիկի կորուստ:

Աշնանավարը պետք ե կատարվի ճիշտ 13—15 սանտիմետր խուրությամբ և առանց անվար տեղեր թողնելու: Ամենախայտառակ յերեվույթն այն ե, յերբ կոլտնտեսություններում ու խորհնտնտեսություններում տրակտորներով հերկված հողը խայտարդետ տեսք ե ունենում, այսինքն՝ ունենում ե անազին քանակությամբ չվարված հողակոշաբեր, վորոնք ծածկված են խոզանով: Հենց իրենք, տրակտորիստները պիտք ե մասնակցեն անփույթ հերկի և անվար հողակոշաբեր թողնելու դեմ պայքարելու գործում: Աշնանավարի հաջողությունը նրա վորակի մեջն ե կայանում: Իսկ վորպեսզի վարը լավ կատարվի, դրա համար բրիգադների և դաշտարույժների հսկողության, աշխատանքների վորակը գործավարձով գնահատելու հետ միասին՝ իրենք, տրակտորիստներն և պետք ե գիտակցն այն վիթխարի նշանակությունը, վորպիսին ունի լավորակ աշնանավարը բերքի բարձրացման համար: Տրակտորիստներին աշխատանքի գործում մեմպերով և վորակով շահագրգուելու մասին կուսակազմակերպությունների, Յերկրնողվարչության և կոլտնտեմիության տված դիրեկտիվները լիովին պետք ե կատարվեն:

Սակայն սա գեռ քիչ ե: Միայն բարեխիղն աշխատանքը բավական չե: Պետք ե նաև անինա պայքարել կուլակային գործակալության դեմ, վորը հաճախ տրակտորի դեկի հետեւ թագնված՝ հականեղափոխական գործ ե կատարում, թույլ տալով խայտառակ և անփույթ վար: Հաճախ մնում են դեռք չտված զանազան մոլախոտեր: Բոլոր առաջավոր, գիտակցի կոլտնտեսականներն անողոք պայքար պետք ե հայտարարեն այսպիսի գնահատար վարի գեմ: Միայն կուլակն ե, վոր ուրախանում և ամեն մի չվարած հողաշերտի համար, վորովհետեւ յուրաքանչյուր չվարած հողաշերտ: — դա նշանակում ե ցածր բերք: Մի քանի գեպքերում (բերքահավաքն ուշացնելու և այլ գեպքերում) խորհնտնտեսությունները չեն կարու

հանում բոլոր հողամասներում վաղ աշնանավար սկսել Այս դեպքում վաղ աշնանավարը կարելի յէ փոխարինել խոզանի թեթեվ վորով կամ 7—6 սանտիմետր խորությամբ ծանծաղ վարով՝ հացահատիկը տնկելուց անմիջապես հետո: Սակայն թեթեվ կերպով հերկված արտն անպայման աշնանը պետք է վարել սովորական խորությամբ: Թեթև հերկի նշանակությունն ավելի ևս կմեծանա մանավանդ այն դեպքերում, յերբ թեթեվ հերկից հետո աշնանավար չի կատարվում և պետք կլինի ցանել գարնանավարի վրա:

Որինակի համար, Ծոստով-Նախիջևանի փորձնական կայանում, առանց նախապես թեթև կերպով հերկված գարնանավարի վրա ցանված գարնանացորենը 10 տարի շարունակ 1 հեկտարից տվել է 7,3 ցենտներ, իսկ նախապես թեթեվ կերպով հերկված հենց նույն գարնանավարի վրա—տվել է 8,9 ցենտներ 1 հեկտարից:

Իերքահավաքը արակտորներով կատարելու դեպքում, թեթեվ վարը կարելի յէ կատարել հենց հայի բերքահավաքի հետ միասին, բերքահավաքի մեքենաներին կցված դժուկավոր կուլտիվատորներով: Սա հեշտությամբ կարելի յէ կատարել մանավանդ բերքահավաքի կոմքայններով կատարելիս, յերբ արան ամբողջովին ազատվում և հացաբույսից և յերբ արակտորի ուժը լրիվ չի ոդուազործվում կցված բերքահավաքի մեքենաներով: Բայց դրա համար խրձկապ մեքենաներով պետք և հավաքել հարդը և զարսել այն վորոշ տեղում:

Խոնավային և նախալեռնային ռայոնների համար աշնանավար և թեթեվ վարը, վորպես խոնավություն կուտակող միջոց, առանձնապես մեծ նշանակություն չունի: Սակայն նրանք, վորպես մոլախոտերի դեմ պայքարելու կարելորագույն միջոցառում, այստեղ ևս պահում են իրենց նշանակությունը:

Այսինչ չորային ռայոններում աշնանավարը նշանակություն ունի նաև վորպես խոնավություն կուտակող և պահպանող միջոց: Այսպես՝ Ծոստով-Նախիջևանի փորձնական կայանի տվյալներով, գարնանավարի վրա ցանված գարնանային ցորենը յերաշտ տարիներին 1 հեկտարից տալիս է հազիվ 4,7 ցենտներ, իսկ աշնանավարի վրա տալիս է մինչև 8 ցենտներ 1 հեկտարից:

Այսպիսով ուրեմն, աշնանավարը պետք է դառնա գարնանացան ռույսերի համար հողը նախալատքասելու պարտադիր միջոցառում, վորպես կարելորագույն միջոցառում՝ մոլախոտերի, մասսատուների և յերաշտի դեմ պայքարելու գործում:

Աշնանավարը պետքական չե միայն այն դեպքում, յերբ գարնանացան բույսերի համար ոգտագործվում է շարքահերկ բույսերով զրագված դաշտը: Այս արտը, վորն ազատված է լավ մշակված յեգիպտացորենից, արևվածաղկից, բոստանից և արմատապուղներից, կա-

րիք չկա այդպիսի արտը հերկել ձմեռվա համար: Ցանքսից առաջ հարկավոր ե միայն տափանել կամ կուլտիվատորներով մշակել Փորձնական կայանները և կոլտնտեսությունների ու խորհուտեսությունների փորձը ցույց են տվել վոր ճիշտ մշակված շարքահերկ բույսերի արտի աշնանային վարը չի բարձրացնում բերքը, ցանքսից առաջ կատարված հասարակ հողամշակման հետ համեմատած: Սակայն շարքահերկ բույսերի այն արտերը, վորոնք վատ են մշակված և մոլախոտերով աղտոտված են, անկասկած, այդպիսիները աշնանավարի կարիք ունեն, աշնանավար, վորն այստեղ ևս պետք է հապաստի մոլախոտերի վոշնչացմանը:

ԱՇԽԱՎԱՐ ԲՈՒՅՍԵՐԻ ՎԱՄԱՐ ՑԵԼԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Աշխանացորենի բերքը բարձրացնելու համար ցելը լավագույն միջոցն եւ: Սա ապացուցված է թե փորձակայանների կողմից և թե հենց խորհուտեսությունների և կոլտնտեսությունների պրակտիկայով: Որինակ՝ աշխանացորենի բերքը 1 հեկտարից յերկրամասի փորձակայաններում յեղել է այսպիսի:

Ծոստով-Նախիջևանի փորձակայան	Դոնեցի փորձակայան	Յեյլուկու փորձակայան
Վաղ մաքուր ցելի վրա	15,2	16,2
Շարքահերկ	8,5	10,5
Ցել չարգած հողում	7,0	6,2

«Գիգանտ» հացահատիկային խորհուտեսության և ուսումնագիտական խորհուտեսության մեջ աշխանացորենը մաքուր ցելի վրա 1930 և 1931 թվերին 1 հեկտարից տվել ե մինչև 30 ցենտներ բերք, մինչև դեռ ցել չարգած հողում նրա բերքն իջել ե 5-ից մինչև 10 ցենտներ:

Սակայն, մաքուր ցելը պարագալի չի կարելի համարել բոլոր ռայոններում համար, նոսավային ռայոններում միշտ, իսկ կիսաչորացին ռայոններում խոնավ տարիներին մաքուր ցելերը ցանված ցելերի հետ համեմատած, համարյա չեն բարձրացնում բերքը, իսկ մինչույն ժամանակ դաշտը վողջ տարին պարագ ե մնում: Այդ իսկ պատճառով խոնավ ռայոններում պետք է հրաժարվել մաքուր ցելերից և պետք կլինի աշխանացորենը ցանել զրագված ցելերում: Մինչդեռ չորային հողագործական ռայոններում մաքուր ցելերը մուտք պետք է գործեն յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ, վորով-

հետև այդ ռայոններում մաքուր ցելերը կրկնապատկում են աշնանաւրույսերի բնրքը և հնարավորություն են տալիս ստանալու տևական և կայուն բերքեր:

Չորային ռայոններում մաքուր ցելը խոնավություն կուտակելու և պահպանելու լավ միջոց ե հանգիստանում և հողն այնպիսի վիճակում և պահում, փորտեղ նորմալ ժամկետերում կարելի յե աշնանաւցան բույսեր ցանել: Խսկ վաղահաս աշնանացան բույսեր, փորոնք նորմալ ժամկետումն են ցանված, ավելի լավ են մնում ձմեռ ժամանակ, ցրտերից ավելի քիչ չափով են վոչչանում: Խոնավությունը կուտակելուն զուգընթաց, մաքուր ցելերը չորային ռայոններում լուծում են նաև մոլախոտերի գեմ պայքարելու կարեռագույն ինդիբը:

Ցելավոր դաշտի հաճախակի մշակումը կուլտիվատորներով, վրիսունացներով հողի վերին շերտը, թույլ տալով հողին շատ խոնավություն ծծելու և իր մեջ պահելու այդ խոնավությունը, միաժամանակ հնարավորություն և տալիս վոչչացներու միամյա մոլախոտերը և այնուպիսի գարշելի մոլախոտեր, ինչպես են տատանելը, վյունոկը և այլն: Մոլախոտերի գեմ պայքարելու տեսակետից մաքուր ցելերը պետք ե կիրառվեն վոչչ կիսաչորային գոտու խորհնանասություններում ու կուլտնասություններում, փորպես մոլախոտերի գեմ բուժական ուժեղ միջոց մոտակա 2 տարիներում: Նույնիսկ խոնավային գոտում մոտակա 2 տարվա համար լիովին նպատակահարմար ե չափից ավելի աղտոտված հողերը ցելեր փորպեսի դրանով թուլացվի մոլախոտերի ֆլասակար ներգործությունը, մոլախոտեր, փորոնք ուղղակի արգելք են լինում տնտեսություն վարելուն: Խսկ յերբ խոնավային և կիսաչորային գոտիների հողերը մոլախոտերով շատ չեն աղտոտված, այդ դեպքում մաքուր ցելերից պետք ե հրաժարվել և աշնանացան բույսերը ցանել դրադված ցելերում, այսինքն շարքահերկ մշակույթներից հետո:

Քաղստանում նույնպես պետք ե կիրառել զբաղված ցելերը և միամյայն անջրդի ռայոնների շատ աղտոտված հողերում կարելի յե կիրառել մաքուր ցելերը:

Ցելկրամասի չորային և կիսաչորային ռայոններում պետք ե գործադրել ակոսաձեւ և խերսոնային ցելեր (այն ցելերը, փորոնք ցանված են լայն շարքամիջյան տարածություններ ունեցող շարքահերկ մշակույթներով):

ՆԱԽԱՑԱՆՔՍԱՅԻՆ ՀՈՂԱՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԲԵՐՔԸ

Լավ բերք ստանալու ստանձին պայմանը—դա վարելու միջոցով հողի նախապատրաստումն և և մշակույթների համար տեղի ընտրու-

թյունը: Նախացանքսային աշխատանքի վորակը վիթխարի նշանակությունը ունի: 1931 և 1932 թվերին շատ խորհնանասություններ և կոլտնտեսություններ ահագին թվով հողամասերից վատ բերք հավաքեցին լոկ այն պատճառով, վոր վատ կատարեցին նախացանքսային աշխատանքը: Այն աշնանավարը, վորը կատարված և խոպան հողերի վրա, նա պահանջում ե, փորպեսօվի գարնանը ևս հողի մակերեսը լավ և խնամքով վերամշակվի: Դիսկերով, կուլտիվատորներով և ծանր տափաններով կատարվող հողամշակումը պետք ե հավասարեցնի և փլուրունացնի բոլոր թմբերը և վարած հողի մակերեսում յեղած հողակողակը բաժանելու ժամանակակիցները: Յանքսերն անհաջող, բերքը չնշին, հողամշակումը և բերքահավաքը դժվարին են յեղել հատկապես այն դեպքերում, յերբ ներկած խոպան հողերում ցանել են առանց պետք յեղած չափով հողակողակը բաժանելու:

Բայց յեթե աշնանավարը կատարված և խոպանում, առա այս դեպքում ևս պետք ե տափանով ինամքուու և նախապես բաժանել գաշտը: Աշնանը վարած ամբողջ հողը ամենակարճ ժամկետում պետք ե տափանել հենց վոր գարունը բացվեց:

Քարնանային առաջին աշխատանքը պետք ե լինի աշնանավար հողի տափանումը: Փիրացնող տափանումով աշնանավար հողը շուտ չի չորանում և հանգիստ կերպով կարող ե սպասել թե վաղահամ և թե ուշ հասունացող մշակույթների ցանքսին: Շատ կոլտնտեսությունների և խորհնանասությունների գարնանային աշխատանքներում ունեցած սխալները կայանում են նրանում, վոր նրանք հաճախ ուշացնում են հողի տափանումը. դրանով հողը չորանում և և այսունեւն դժվարացնում ե վոչչ միայն տափանումը, այլ նաև ցանքսը: Դրա համար գարնանը, հենց վոր հարավոր լինի դաշտ գուրս գալ անհրաժեշտ և իսկույն տափանել ամբողջ աշնանավար հողերը:

Ցեր դաշտը նշանակված և ուշ ցանքսերի համար և նա ծածկվում և մոլախոտերով, այդ դեպքում նախքան ցանելը պետք ե բազմախոփանի արորներով կամ դիսկավոր կուլտիվատորներով թեթե կերպով հերկել: Նույնը պետք ե անել նաև վաղ գարնանից ներկված հողում ցանքս կատարելու գեպքում: Հաճախ, մինչև ուշ հասունացող բույսեր ցանելը, մոլախոտերն արդեն բնանաւ թե աշնանաւնավար և թե գարնանավար հողերում: Այդ խսկ պատճառով հողը ցանքսից առաջ կուլտիվատորներով մշակելը, վոչչացնելով բանած մոլախոտերը, յերկարագում և ուշ հասունացող բույսերի առաջին քաղաքանը և թեթեացնում և քաղաքանը և քաղաքանի աշխատանքների բեռը: Սա խորը նշանակություն ունի այն բույս խորհնանասությունների համար, փորոնք ունեն ահագին տարածությամբ վարած հող՝

Աշնանավարի վաղ տափանման և հողի ճիշտ մշակման համար պայքարելը հանդիսանում և զասակարգային պայքարի բնագավառ, ինչպես նաև հենց ցանքը, վորտեղ կուլակության մնացորդները փորձում են այս աշխատանքները սաբուտածի յենթարկել վորպեսզի դրանով իջեցնեն կոլտնտեսային դաշտերի բերքը:

ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԺԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բոլորն ել գիտեն, թե ինչ նշանակություն ունի անասնի ցեղը կաթնատպության բարձրացման համար: Դերմանական կովերը 2—3 անգամ ավելի շատ կաթ են տալիս, քան հասարակ կալմիկական կովերը:

Վոչ պակաս նշանակություն ունի նաև սերմացվի ցեղը, տեսակը՝ բերքի բարձրացման համար: Բոլորին հայտնի յէ, վոր յերաշտի վնասված դաշտում մնում են նորմալ հասկեր, իսկ ցրտահարության տարիներին աշնանացան բույսերի փշացումից հետո արտում մնում են բոլորովին նորմալ բույսեր, վորոնք անվնաս են մնացել Սա բացատրվում ե նրանով, վոր բազմաթիվ բույսերի մեջ գտնվել են այնպիսիները, վորոնք դիմացել են թե յերաշտին և թե ցրտահարությանը: Դժոնել այս բույսերը, բազմացնել նրանց—նշանակում է անտեսության մեջ ձեռք բերել նոր այնպիսի տեսակներ, վորոնք ոժտված են շատ ոգտավեա հատկություններով: Նոր տեսակը ներ ընտրելու գործով զբաղվում են ընտրական կայանները: Սակայն այս գործում պետք ե ոգնեն նաև խորհանտեսություններն ու կուտնտեսությունները: Տեսակների լավացումը միանգամայն վատահաբար խոստանում և բարձրացնել բերքը 20—30 տոկոսով:

Բոլոր կոլտնտեսականները՝ և խորհանտեսային բանվորները գիտեն, թե ինչպես տեսակավոր արևածաղիկները («Սարատովյան» կամ «կլորակ» տեսակները և այլն) մյուսներից տարբերվում են իրենց գլխարկի համաչափությամբ, հարթությամբ և մեծությամբ, նրանք սերմերի առատությամբ և այլն: Տեսակավոր արևածաղկի բերքը սովորաբար ավելի բարձր ե լինում, քան տեղական հասարակ «խառնածին» («Մեջեսմօր») կամ «յուղաբեր» («մասլինա») արևածաղիկներինը: Ներկայումս մենք վորոշ հաջողություններ ենք ձեռք բերել վարակիչ հիփանդություններին դիմացող արևածաղկի տեսակ գուրս բերելու գործում: Նման տեսակի տարածումը հակայական չափով կարող է ավելացնել բերքը:

Վերջին տարիներում խորհանտեսություններն ու կոլտնտեսություններն արդեն մեծ հաջողություններ ունեն մշակույթների տեսակակավոր կազմը նորոգելու գործում: Շատ խորհանտեսություններում

և կոլտնտեսություններում ցանքսատարածությունների մեջ մասը ցանցել ե արգելն զտատեսակ սերմերով: Սակայն, դեռ կան շատ կոլտնտեսություններ և խորհանտեսություններ, վորոնք չունեն տեղական բոլոր պայմաններին լիովին համապատասխան տեսակներ: Անհրաժեշտ ե ել ավելի լրջորեն ստուգել տեսակները և բազմացնել լավագույնները: Ընտրակայաններն ավելի և լուրջ աշխատանք պետք և կատարեն տարածելու համար գարնանացորդինի յերաշտագիմացկուն, չթափազող աշնանացորդնի, ցրտին և յերաշտին դիմացող և արևածաղկի՝ վարակիչ հիփանդություններին դիմացող տեսակները:

Գարնանացորդնի մշակող բոլոր հյուսիսային ուայոնների համար ցորենի ամենալավ տեսակները՝ քիսապուպիրիում 0341» և փափուկ, անքիստ (սպիտակամաշկ) «Ալբիզում 0604»*), «Լուտանցինս 062», ամուր «Մելյանոպուս 069» և տեղական «Գարնովկա» տեսակներն են:

Յերկրամասի հյուսիսային և չորային ուայոնների համար ամենալավ տեսակի աշնանացորդնը՝ «Գոստիխանում 237-ը» տեսակն ե, խորհանակային ուայոններում—«Ուկրայինկան» և «Սեպտուսկան», Ստավրոպումի ուայոններում—«Կոոպերատորկան» և «Ստենյաչկան»: Ամբողջ յերկրամասի համար խորհուրդ և արվում մշակել գարու «Մեղիկում 026» և տեղական «Քառանիստ» տեսակները, իսկ Մայկոպի տափաստանի խոնավային ուայոնների համար—գարու «Կոլիխիկում 10-30» տեսակը:

Իրեկ արևածաղկի լավ տեսակ, խոնավային ուայոնների համար խորհուրդ և արվում մշակել «կլորակ 41» և «կլորակ 631» տեսակները: Իսկ յերկրամասի ամերող հյուսիսային և արևելյան չորային մասում—«Սարատովյան 169»:

Իրեկ յեղիպտացորդնի լավ տեսակ, յերկրամասի լուսային և նախալեռնային խոնավ ուայոններին հանձնարարվում և մշակել սպիտակ հյութալի տեսակը, կուբանի ուայոններին—«Լիմինզը» և յերկրամասի արևելյան չորային ուայոններին «Ալյորի-կինզը» և «Գրուշեկայա» տեսակները: 1932 թվի փորձը ցույց տվեց, վոր յերբ շատ խորհանտեսություններում յեղիպտացորդնը հավաքվեց ամերիկյան յեղիպտացորդնահավաք «պիկկեր» մեքենայով, ապա պարզվեց, վոր «Ալյորի-կինզը» պետքական չե այն խորհանտեսությունների և կուտնտեսությունների համար, վորոնք մեքենայացրել են յեղիպտացորդնի բերքահավաքը: «Ալյորի-կինզը» պատահները ցածր և կախված մինելու պատճառով, պիկկերը դաշտում թողեց բերքի մինչև 30—40 տոկոս:

*). «Ալբիզում 0604» շուտ թափող տեսակ լինելու պատճառով, խոշոր, մեղենացում անտեսության համար միանգամայն անպես եւ:

Պիկերներ բաց թողնելու ասպարիզում կատարվող «Աքսայ» գործարանի հաջող աշխատանքը հնարավորություն կտա հագեցնելու այս մեքենաներով այն խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների պահանջը, փորոնք բավականաչափ յեկիպտացորեն են ցանում:

Դրա համար մեքենայացված բերքահավաք ուժնեցող խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները վճռականապես պետք է փոխարինեն «Այլորի-հինգը» ուրիշ տեսակներով։ Հարավում—«Թերեքի սպիտակ», «Թերեքի դեղին» և «Լիմինկ», իսկ հյուսիսում—«Գրուշակայա» և «Մինեզոտե Նև 13 և 23» տեսակներով։

Յուրաքանչյուր խորհտնտեսության և կոլտնտեսության կարևորագույն խնդիրներից մեկը—գա սերմացույի ժամանակին մթերումն է։ Ինչպես ցույց տվին կուրանի գասերը, կուլակության մնացորդները, ցանքսի և հաշամթերումների սարոտաժին զուգընթաց, վիժեցրին նաև սերմացույի մթերումը։ Այնտեղ, ուր զեկավարությունը դասակարգային թշնամու ձեռքումն է յեղել, սերմացուները լցվում ենին կուլակային հորերը, իսկ աշնանացանը իբր թե սերմացվի բացակայության պատճառով չկատարվեց (Պոլտավակայա ստանիցան և ուրիշներ)։

Մանավանդ կարելու և ժամանակին հավաքել գարնանացանի սերմացուները և խնամքով պահպանել։

Չի կարելի թույլ տալ փորպեսզի սերմացուները վոչչանան զանազան փաստառների կողմից։

Ցաներուց առաջ սերմացուները պետք է նախապատրաստված լինեն չացահատիկի սերմացուները պետք և զտվեն և տեսակավորվեն։ Ցանքսի համար պետք է ծոկել ամենալավերը, լիակելու հատիկները, փորոնք զերծ լինեն մոլախոտերի սերմերից և մաքրված լինեն կոտրտված հատիկներից։ Սերմացվի զտման և տեսակավորման աշխատանքը կատարվում է հատուկ տեսակավորող մեքենաներով—տրիերներով և սերմագաղիչ բարդ մեքենաներով—«Պոկտուս», «Հեյդա» և այլն, փորոնք այժմ գործածվում են հացահատիկային խորհտնտեսություններում։

Զտված և տեսակավորված սերմացուները պետք է ախտահանվեն։ Սերմացվի ախտահանումը կատարվում է զանազան թունավոր նյութերի միջոցով, փորոնք սպանում են բույսերի հիվանդություն առաջ բերող փոշեսունկերի սաղմերը։ Ախտահանությունը կոչվում է թաց, յեթե սերմացուներն ախտահանվում են Փորմալինի լուծույթով (1 մաս Փորմալին և 300 մաս ջուր) և չոր, յեթե ախտահանումը կատարվում է սերմացուների վրա թունավոր փոշի սրսկելու միջոցով՝ պղնձի ածխաթթվի կամ չոր պղնձի արջասպի միջոցով և այլն (16 կիլոգրամ սերմացվի համար վերցնում են 48 գրամ պղնձի ածխաթթու, կամ 48 գրամ չոր արջասպի)։

Չոր յեղանակով ախտահանված սերմերը վոչ անասնի կերի և վոչ ել աղալու համար պետքական չեն, վորովհետեւ թունավոր են։ Խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում չոր ախտահանումն ավելի հարմար է, վորովհետեւ նա հնարավորություն և տալիս ցանքսից շատ առաջ կատարելու այս աշխատանքը՝ առանց սերմացուն վասելու, վորպիսին կարող և պատահել թաց ախտահանման ժամանակը, յերբ սերմացուները լավ չեն չորացվում, թե մեկ և թե մյուս ախտահանումը կատարվում է հատուկ մեքենաներով, վորոնք մատչելի յեն ամեն մի խորհտնտեսության և կոլտնտեսության համար։

Հացահատիկային հասկավոր բույսերը, յեգիպտացորենի, խոտերի, արմատապտուղների և նոր մշակույթների (սոյա, արախիս, կանեփ և այլն) սերմերը պետք է փորձարկվեն՝ իմանալու համար, թե ինչքան նրանք ընդունակ են ծլերւ, վորպեսզի հնարավոր լինի ճիշտ հաշվել ցանելու չափը և թույլ չտրվի պակաս ցանելու այնպիսի սերմացուներ, վորոնք նվազ ծլունակ են։

Մանավանդ հաճախ կարելի յետեսնել յեգիպտացորենի կտրատված, անհամաշափ ցանքսեր, վորոնք չափազանց իջեցնում են թերքը։ Դրա համար ծլունակությունն իմանալու նպատակով կատարվող յեգիպտացորենի սերմացվի փորձարկումը հատուկ ուշադրության և խնամքի պետք է արժանանա։

Սերմացվի նախապատրաստման և ստուգման հանդեպ անուշաղիք վերաբերմունք ցույց տալը նույնպես դասակարգային թշնամու գործն է։ Միայն կոլտնտեսության թշնամին կարող է թույլ տալ վատ ծլող սերմացվի ցանքը։ Յեգիպտացորենի ցանցառ ցանքսերը համարա ընդհանուր յերեվույթ են։ Մանավանդ շատ ցանցառ են լինում այն ցանքսերը, վորտեղ դասակարգային թշնամին լավ և «աշխատել» և խորհրդային ու կոլտնտեսային կազմակերպությունները վոչինչ չեն արել այս թշնամու գեմ պայքարելու ուղղությամբ։ Զպետք է մոռանալ վոր, որինակ, վատ սերմերով յեգիպտացորեն ցանելը—նշանակում է յուրաքանչյուր հեկտարից կորցնել 5—10 ցենտներ թերք։

ՅԱՆԳԻ ԺԱՄԿԵՏԵՐԸ ՎՃՐՈՒՄ ԵՆ ԲԵՐՔԻ ՀԱՀՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՐՆԱՆԱՑՄԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԺԱՄԿԵՏԵՐԸ

Բոլոր մշակույթների ժամանակին կատարվող ցանքսը խոշոր և կարելու նշանակություն ունի բերքատվության բարձրացման համար մզգող պայքարում։ Այնպիսի մշակույթների համար, ինչպիսին են՝ գարնանացան ցորենը, գարբին, արևածաղիկը, և մասամբ հակնդեղը,

շանքսի վաղ ժամկետը հանդիսանում է բերքի բարձրացման ուժեղ ժիղու:

Բերում ենք ահա մի ազյուսակ, վորը ցույց է տալիս, թե ցանքսի զանազան ժամկետում վոր մշակույթն՝ ինչքան բերք է տալիս:

Մշակույթների անունները	Բուսագիրի փորձա- կայտն			Կրասնոգարի փոր- ձակայտն		
	Վա. Վ	ՄՀՀ Մ	Ա	Վա. Վ	ՄՀՀ Մ	Ա
Գարնանացորեն ..	9,6	6,4	5,1	14,2	9,6	4,2
Արևածաղիկ ..	15,6	11,5	—	18,4	16,1	10,2

Այս աղյուսակից պարզ յերևում է, թե ինչքան մեծ է այս մշակույթների վաղ ցանքսի նշանակույթյունը՝ բարձր բերք ստանալու համար: Վորպեսզի հնարավոր լինի լրիվ ապահովելու այս մշակույթների վաղ ցանքսը, այլ վոչ թե ամսով ձգձգել դրա համար պետք է վաղացան մշակույթների ցանքսն ալիքարտել 10—12 որում: Ցանքսի 10—15 որով ուշացումը 30—50 տոկոսով ինցնում է բերքատվությունը:

Բուսագիրի փորձակայտան իր յերկարամյա (1922—1928թ.) հետազոտություններով ապահուցել են վոր գարնանացան ցորենի ցանքսը ալիս և հետևյալ բերքերը:

1) Սագախոտի ծաղկելու ժամանակ (վաղ ցանքս) 12,8 ցենտներ: 2) Մանուշակի ծաղկելու ժամանակ (միջին ցանքս, հողն ունի մինչև 10 աստիճան տաքություն) 8,2 ցենտներ:

3) Կակաչի ծաղկելու ժամանակ (ուշ ցանքս, վարած շերտը բաշխանաչափ տաքացել ե) 6,7 ցենտներ:

Մեր յերկրամասում գարունը սովորաբար նպաստավոր է և գարնանային ուժեղ տաքությունից ու չոր քամիներից հողն արագությամբ չորանում է: Այդ իսկ պատճառով վաղացան մշակույթների ցանքսի ուշացումը սուխում և նրան ցանել չոր, շատ տաքացած հողում, իսկ չոր հողում սերմը դժվարությամբ է ծրագ: Իսկ յեթե նույն իսկ սերմերը խոնավանան եւ ապա ծերը զարգացնում են վարթամ տերեներ և թույլ չափով են արմատակալում, մինչեւ վաղ ծերը, վորոնք դուրս են զալիս ցուրտ յեղանակին, ավելի թույլ չափով են զարգացնում տերեները և ավելի խոր և ուժեղ են արմատակարում: Մրանով ել հենց բացատրվում է վաղ ցանքսի մեջ դիմացկությունը տաքության, յերաշտի և բնական այլ աննպաստ պայմանների գիտ: Վաղ ցանքսի շնորհիվ բույսերի արմատներն ավելի ուժեղ

են լինում, վորոնց ոգնությամբ բույսերը տերեներին տալիս են անհրաժեշտ քանակությամբ ջուր չոր յեղանակներին: Ուշ դուրս յեկած ծլերը թույլ արմատներ են ունենում, չեն կարողանում ջուր տալ բույսի վերեկի մասին, վորի պատճառով բույսերը սովորաբար շատ են վնաս վում յերաշտի ժամանակ և նույնիսկ բոլորպին վոչնչանում են: Բացի դրանից, շոգն արագացնում է ուշ ցանքսերի զարգացումը: Ուշ ցանքսերը սովորաբար քիչ ուշ են հասունանում և վաղ ցանքսերի հետ համարյա միաժամանակ են հնձվում: Պարզ է, վոր այսպիսի արագ զարգացումը չի ապահովում նորմալ բերքի կուտակումը: Ուշ ցանքսերի խիստ նվազ բերքը բացատրվում է նաև նրանով, վոր նրանք վատ են պաշտպանվում յերաշտի դեմ և քիչ բերք են կուտակում:

Սակայն վոչ բոլոր մշակույթներն են, վորոնք վաղ ցանքս են պահանջում: Յեզիպտացորենը, սուղանկան, սոյան, սորգոն, կորեկը, բոստանները պետք են ցանքեն լավ տաքացած հողում: Ծլերի ուշ զարգացումը, սերմերի մի մասի վոչնչանալը և սուղանկայի, սոյայի ու յեզիպտացորենի ցածր բերքը հաճախ բացատրվում է հենց նրանով, վոր ցանքսը սառ հողում և կատարվել, այսինքն՝ շատ վաղ: Սա բացատրվում է նրանով, վոր ուշ ցանքվոր և տաքություն սիրող բույսերն իրենց կյանքի առաջին որերում շատ դանդաղ են զարգանում: Ցուրտ յեղանակին նրանք համարյա չեն աճում և հաճախ վոչնչանում են թեթև սառնամանիքներից և աճելու համար անհրաժեշտ ջերմության բացակայությունից: Ըստհակառակին ծլերն արագությամբ են զարգանում:

Տաքություն սիրող սերմները, թաղվերով սառը հողում, հաճախ փոտում և կորցնում են ծլունակությունը: Դրա հետեանքով սերմները անհամաշափ են ծլում—տեղ-տեղ ծլում են իսկ տեղ-տեղ ել բույսությունների դուրս չեն վալիս: Բացի դրանից, ներմություն սիրող բույսերի վաղ ծլերի դանդաղ զարգացումը, մոլախոտերի բույն աճման դեպքում, չափազանց ալղոտում են զաշտը: Անա թե ինչու սոյան, սորգոն, սուղանկան, յեզիպտացորենը սիրում են տաք հողում ցանքվել: Ցանքս սային պլաններ կազմվելիս և հենց ցանքս կազմակերպելիս, անհրաժեշտ է կազմել ցանքսի ճիշտ յերթ: Սակայն չի կարելի ուշ ցանքող մշակույթների ցանքսը մինչև ամառվա կիսաը ձգձգել ինչպես դանդաղ ունեցաւ 1931 և 1932 թվերին, յերբ մի քանի կոտոնտեսություններ արևածաղիկը և յեզիպտացորենը ցանեցին մինչև հունիսի կեսերին:

Ցանքսը պետք է կատարել լավ փխրունացված հողում: Բոստանիք և այլ խոշոր գործարանների ունեցած շարքացան մեքենաները հնարավորություն են տալիս ամեն տեղ կատարելու շարքային ցանքս:

Յերբ պետք լինի ցանքսը կատարել գարնանավարի վրա, այդ գեղքում հարկավոր և բուկիերով տափանել (վարն ու ցանքսն ուշացնելու դեպքում): Ուշ վարը սովորաբար կատարվում է այն ժամանակ, յերբ վարած հողի մակերեսը չորանում է այնքան ուժեղ, վոր շարքացան մեքենան սերմերը դասավորում ե քիչ խոնավացած շերտում: Այսպիսի դեպքերում բուկիերով ցանելն ավելի լավ է, քան շարքացանով ցանելը, մասնավանդ, յեթե բուկիերով ցանելուց հետո դաշտը դաշտով հարթվի և նրա հետևից ել թեթև տափանով տափանվի:

Քանի վոր շարքածերկ ցանքսը մեծ չափով տարածվել է և արակտորային քաղնանը լայն կիրառում ե գտել, անա դրա համար ցանքսի ժամանակ շարքերի միջև պետք է թողնել այնքան հեռափորություն, վոր արակտորները շարքերի միջով կարողանան անցնել առանց կոտրանելու ցանքած բույսերն իրենց անիվներով: Այստեղ ուր պիկերներ են գործադրվում, յեզիպտացորենի շարքամիջյան լայնությունը պիտի համապատասխանի պիկերի բերքահավաք ապատաների միջև յեղած տարածությանը: Շարքացան մեքենաները գործի դնելիս և ցանող խոփիկների միջև հեռավորություններ սարքելիս, ինամքով պետք է պահպանվեն այս շարքամիջյան հեռավորությունները: Զանազան շարքածերկ մշակույթների շարքերի միջև մոտավորապես կարելի յե թողնել հետևյալ հեռավորությունները: յեզիպտացորենի և գենապերչակի համար մինչև 150 սանտիմետր, արեածաղկի և սոյայի համար՝ 60—70 սանտիմետր:

Աշխատանքները հաջողությամբ կատարելու համար արակտորային քաղնանը խոշոր նշանակություն ունի, վորովնեան մի տրակտորով որական կարելի յե հերկել մինչև 30—40 հեկտար:

Ցանքսից հետո հաճախ պահանջվում է գործադրել հարթիչ գլանափ, հարթիչը պետք է լինում այն բոլոր դեպքերում, յերբ հողը ցանելուց առաջ, լավ չի փիրունացված: Հարթիչը փշրում է կոշտերը, բոլոր դատարկ տեղերը լեցվում են և սերմերն ընկնում են աճման լավ պայմանների մեջ:

Հարթիչը պետքական և նաև ուշ ցանքսի ժամանակ, յերբ սերմերը դասավորվում են վոչ բավարար խոնավ հողաշերտում: Այս դեպքում դաշտի մակերեսը խտանալով նպաստավոր պայման և ստեղծում բարակ և շատ նեղ անցքերի միջոցով հողի ստորին շերտերից խոնավություն քաշելու համար, այս բարակ անցքերը գոյանում են խտացված հողում: Սակայն չի կարելի հարթիչը գործադրել այն ժամանակ, յերբ ցանքսը ժամանակին և կատարվում, խոնավ հողում: Այս դեպքում հարթիչը, ոգուտի փոխարեն, վասա և բերում: Յերբ խոնավ դաշտը հարթվում է, ջուրը ստորին շերտերից սկսում և ափելի շատ բարձրանալ և հաճախ հողի յերեսի վրա կեղև և գոյանում, իսկ կեղևն

արգելք է լինում ծլերի դուրս գալուն և առաջ և բերում հողի խոնավության ափերորդ շոգիացում:

ԱՇԽԱՏԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆՔՍԻ ԺԱՄԿԵՏԵՐԸ

Բերքատվության բարձրացման համար աշխանացան մշակույթների ժամկետին ցանելը նույնքան մեծ նշանակություն ունի, ինչպիսին վոր ունի գարնանացան մշտկույթների ժամկետերի պահպանումը: Վերջին յերկու տարիների փորձը հնարավորություն և տալիս կուտնասականին համոզվելու այս բանում: Խնչպես հայտնի յե, աշխանացան ցորենը ձմեռ ժամանակ ձյան տակ մնում է պահանաչ» վեճակով: Հայտնի յե նույնպես, վոր աշխանացան բույսերի ձմեռվացրականին դիմանալու աստիճանը կախում ունի «կանաչների» գրությունից, ծլերի արմատների ուժից և ամրությունից: Ծլերն ինչքան լավ զարգացած լինեն; ինչքան լավ արմատակալած լինեն մինչև սառնամանիքները, նրանք այնքան ափելի լավ են ձմեռում: Ամուր արմատների սիստեմից գուրս յեկած ծլերն անհամեմատ ափելի լավ են դիմանում սառած հողաշերտի սառնամանիքներին, հողի փոփոխակի հալչելուն և սառչելուն՝ քան աշխանացան բույսերի ուշ ծլած և թույլ բողոքները: Մոտավորապես կարելի յե ասել, վոր աշխանացան բույսերի ծիլերը կարու կ նորմալ կերպով զարգանալ միայն այն գեղքում, յերբ նույն ցանքսից մինչև ցրտերը 6—7 շաբաթ և մնում:

Յերկրամասի գանազան ուայոններում յեղանակների տարբերության համապատասխան սահմանված են աշխանացան մշակույթների մոտավոր ժամկետերը: Այսպիսի յերկրամասի հյուսիսային ուայոնների համար, վորտեղ ցրտերն ափելի շուտ են սկսվում, ցանքսի նորմալ ժամկետեր կարելի յե համարել ոգոստոսի վերջը և սեպտեմբերի առաջին կեսը (մինչև սեպտեմբերի 20): Յերկրամասի կենտրոնական մասում սեպտեմբերին և հոկտեմբերի առաջին տասորյակին կատարված ցանքսերն ապահովում են ծլերի նորմալ զարգացումը: Յերկրամասի հարավային աշխանացորների ուայոններում սեպտեմբերի յերկրորդ կեսին և հոկտեմբերի առաջին կեսին (մինչև հոկտեմբերի 20) կատարված ցանքսերը հնարավորություն են տալիս լավ բերքատանալու: Հարավային մասում աշխանացան մշակույթների չափազանց վաղ ցանքսերը վասավում են շվեդական և հետենյան ճանձից: Իսկ մյուս կողմից, չափազանց ուշ ցանքսը, նույնիսկ այստեղ, ձմեռվատաք և խմակ պայմաններում, խոշոր չափով իջեցնում է աշխանացան մշակույթների բերքը:

Ուշ ցանքսի բույսերին մինչև ցրտերի վրա հասնելը չի հաջող փում: ամրապնդվել թփակալել և զարգացնել արմատների լավ սիստեմ:

Աւշ ցանված բույսերին չի հաջողվում նույնիսկ նորմալ կանաչ գույն ստանալ: Այսպիսի գեղքերում ասում են, վոր աշնանարույսը «գույր նից դուրս չի յեկել»: Առանձին ցրտերը սովորաբար վնասում են այսպիսի աշնանարույսերին: Բայց ուշ ցանված աշնանացան մշակույթներն ամենից ավելի վնասվում են ձմեռվա վերջում և գարնանը տեղի ունեցող փոփոխակի տաք և ցուրտ յեղանակներից: Յերեկվա տաքությունը հալեցնում է հողի մակերեսը, իսկ գիշերվա ցուրտը՝ սառեցնում է: Յեղանակների այսպիսի հաճախակի փոփոխությունը շատ վատ և անդրադառնում աշնանարույսերի ծերի վրա: Այսպիսի գեղքերում աշնանարույսերի արմատները ճաքճռում են հողամասնիկների մհծության փոփոխման հետեւանքով, իսկ հողի մասնիկների մհծությունը փոփոխվում է փոփոխակի ցրտերի և տաքության պատճառով: Այս ծերերը, վորոնք ճաքճքված արմատներ ունեն, ընդհանրապես փշանում են, դուրս են գալիս հողի յերեսը և ճյուղեր չեն արձակում: Այս գեղքում մանավանդ վնասվում են այն ուշ աշնանարույսերը, վորոնք թույլ արմատներ և նվազ զարգացած կանաչ ճյուղեր ունեն: Այստեղ, ուր վաղ աշնանարույսերը վնասվում էն 15—20 աստիճան ցըրտերին—ուշ աշնանարույսերը սովորաբար ամբողջովին փշանում են՝ ցանքսի հետք անգամ չթողնելով: Սակայն ուշ աշնանացան բույսերը միայն ցրտին քիչ դիմանալու պատճառով չեն, վոր վատ թերք են տալիս, Զկարողանալով աշնանից թփակալել, նրանք գարնանը, ինչն վոր տաք յեղանակները վրա յեն հասնում, սկսում են աճել և թփակալել այն ժամանակ, յերբ վաղուց թփակալած աշնանարույսերն արդեն համաշափորեն աճում են: Պետք է նկատել, վոր աշնանարույսերի թփակալումը գարնանն ավելի նվազ նպաստավոր պայմաններումն է տեղի ունենում, քան աշնանը: Գարնան ժամանակ կատարված թփակալումը չի ապահովում բույսերի այնպիսի ուժեղ զարգացում, այնպիսի խտություն, ինչպիսին վոր լինում է վաղ ցանված բույսերի մոտ: Այս պատճառով, ուշ ցանքսի գեղքում անհրաժեշտ ե ավելացնել աշնանարույսերի սերմացանի նորմը: Սակայն այս գեղքում ևս ուշ աշնանարույսերը ցանցառ են լինում: Սա պարզ կերպով կարելի յերտեսնել 1932 թվի ցանքսերում: Մոլախոտերն ուշ ցանված մշակույթներին ավելի շատ են վնասում, քան վաղացաններին:

Ուշ ցանվածները հատիկների լցվելու և հասունանալու բովելին ավելի շուտ են յենթարկվում չոր քամիների, կարկտահարության ազդեցությանը նույն ցանվածները, վորոնք վաղուց են սկսել աճել բնության այսպիսի հանկարծակի հարվածներից ապահով են մնում:

Յերկրում ու Յերկրգործկոմը գարնանացանի և աշնանացանի կամպանիաներին մի քանի անգամ մատնանշեցին գարնանացան և աշնանացան բույսերի սահմանված ժամկետերը կատարելու կարելու

թյունը: Իսկ շատ կոլտնտեսություններ, մանավանդ կուբանի ուայոններում, յենթարկվելով կուլակային տարրերի ազդեցությանը, զարմանալի անզորությամբ և ովորտունիստական բարեհոգությամբ վերաբերվեցին ցանքի ուշացմանը: Հստ վորում, 1932 թվի աշնանը շատ կոլտնտեսություններ «պատճառաբանում» ելին, վոր երր թե թեակոնող յերաշաբ համարվություն չի տալիս ցանելու:

Կարելի՞ յե արդյոք յերաշտը ցանքսին արգելք հանդիսացող լուրջ պատճառ համարել:

Արդյոք վորևե վնաս կա՞ աշնանարույսերը չոր հողում ցանելուց:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ամենից ավելի լավ է աշնանարույսերի սերմերը ցանել խոնավ հողում այն հաշվով, վոր նըրանք ցանվելուց հետո կարողանան աճել և ծեր արձակել: Սակայն աշնանարույսերի մեծ ցանքստարածություններ և մի շարք այլ կարեր աշխատանքներ ունենալու գեղքում, աշնանը բույսերը ժամանակին պետք և ցանել առանց սպասելու անձրևներին:

Այս սերմերը, վորոնք չոր հողի մեջ են ցանված, նրանք սովորաբար չեն աճում մինչեւ պատճին արձրելը: Առաջին անձրեցից հետո սերմերը տալիս են համաչափ ծիլեր: Սերմերը փշանում են միայն այն գեղքում, յերբ աշնանարույսերի սերմերն ընկնում են քիչ խոնավությամբ հողում, չոր յեղանակին: Յեթե ուռչացած և բողոքած սերմերը հողի մեջ խոնավություն չգտնեն, ապա նրանք կարող են փշանալ: Սակայն այսպիսի գեղքեր քիչ կարող են պատճենել յեթե բոլոր ուժերը և քաշող ուժը գործի դրվեն: Պետք է համարձակորեն ցանել աշնանարույսերը՝ թեկուզ հենց չոր հողում, բայց անպայման ժամկետին:

Ցույց տալու համար, թե ինչքան խոշոր նշանակություն ունի ցանքսի ժամանակին կատարելը, դրա համար, իբրև որինակ, կարելի յե բերել 1932 թվի փորձը, յերբ Մեչոտինի, Կուշչեսկի և մի շարք այլ ուայոններում, հացահատիկային փորձակայանի տվյալներով, սեպտեմբերի վերջում ցանված աշնանարույսերը տվել են 1 հեկտարից 4—7 ցենտներ, մինչդեռ հոկտեմբերի յերկրորդ կեսին ցանվածներն ամբողջովին փշացել են: Նեխինումինսկի ուայոնում հենց նույն 1932 թվվի հոկտեմբերի առաջին կեսին շարքերով ցանված աշնանարույսերը տվել են 14—18 ցենտներ բերք, իսկ նոյեմբերի սկզբում խոզանում ցանվածները տվել են ընդամենը 5 ցենտներ: Այստեղ, ինարկե, ազգեցություն են ունեցել նաև նախորդող բույսերը, սակայն բերքի տարբերության գլխավոր պատճառը ժամկետերն ե յեղել: 1932 թվին ցանքսի անթույլատերի ձգձգումը, մանավանդ կուբանի ուայոններում, հաճախ բացատրված է նրանով, վոր մի քանի կոլտնտեսություններում, կուլակային ագիտացիայի ազդեցության տակ, սերմացուն պատճառված չեր, իսկ մի շարք կոլտնտեսություններում ծախծիված եր

կոլտնտեսությունների զեկավարների աջակցությամբ, զեկավարների վորոնք դարձան կուսակցության և խորհրդային իշխանության ուղղակի դավաճաններ։ Յանքսի ձգձգումը, սերմահավաքի և սերմի պահպանման հանդեպ ցույց տրվող անպատճախանատու վերաբերմունքը վոչ այլ ինչ է, յեթե վոչ կուլակության կողմից կազմակերպված սարսոտաժը պետք է անողոք կերպով ջախջախվի և լավագույն կոլտնտեսությունների որինակով պետք է ապահովվի վողջ քաշող ուժի, ինվենտարի, սերմացի որինակելի նախապատրաստությունն՝ աշնանացան սկսելուց բավական ժամանակ առաջ։

Սև տախտակին հանգած նեղամանեկայա ստանիցայի «Կարմիր կուբանցի» կոլտնտեսության մեջ գարնանացորենը ցանվեց մի ամբողջ ամիս, աշնանաբույսերը ցանվեցին սեպտեմբերի 19-ից մինչև նոյեմբերի 20-ը (յերկու ամիս այնպես վոր ցանքսի պլանը լրիվ կատարված չե)։

Այս կոլտնտեսության որինակից յերեսում է, թե ինչքան կարեւ վոր և անողոք պայքար մղել դասակարգային թշնամու դեմ, աշնանացանը ժամանակին կատարելու համար։

Հաճախ աշնանացան մշակույթների ցանքսը ձգձգում է՝ շարքահերկ բույսերն ուշ հավաքելու հետևանքով, վորոնք ոգտագործվում են վորպես նախորդողներ՝ աշնանացան մշակույթների համար։

Շատ հաճախ շարքահերկ բույսերի ուշ բերքահավաքը բոլորովին առաջ չի գալիս նրանից, վոր այս մշակույթները չեն հասունացել։ Շարքահերկ բույսերը հաճախ ուշ են հավաքվում միայն այն պատճառով, վոր կոլտնտեսությունների վարչությունները, բրիգադիրները չեն պայքարում բերքի պահպանման համար, յենթարկվում են կուլակային տրամադրություններին, վատ են դասավորված ուժերը, աշխատանքային կարգապահությունը բացակայում է, բրիգադիրներն ամրապնդված չեն, վատ են ոգտագործում արտադրության բոլոր միջոցները։ Հողամասերը բրիգադներին ամրացնելու հրահանգի չկատարելը, կոլտնտեսականների՝ աշնանաբույսերի ցանքսատեղը չիմանալը բոլոր աշնանային աշխատանքների վատ կազմակերպման առաջին նշանն են հանդիսանում։ Իսկ միթե քիչ են յեղել դեպքեր, յերբ կոլտնտեսականները և յերբեմն ել նույնիսկ բրիգադիրները սեպտեմբերին և հոկտեմբերին չեն իմանում, թե վորտեղ պիտի կատարվի աշնանաբույսը՝ ընթացիկ տարրում։

Յանքսի ժամանակ աշխատանքն այնպես պետք է կազմակերպել վոր լավագույն կոլտնտեսականների, լավագույն բրիգադների որինակով ցանքսն ավարտել ամենակարճ ժամկետերում և ճշշտ այն ժամկետերում, վորոնք սահմանված են ուղյալ ուայոնի համար։

Աշխատանքի բաղաքական-տնտեսական նշանակությունն ինչքան խոշոր լինի, այնքան ավելի դասակարգային թշնամին վորուգայթներ ե լարում Յանքսը կարեւը աշխատանք և, իսկ ցանքսի ժամկետերը վճռում են բերքի հաջողությունները։ Դրա համար ել ժամանակին պետք և ջախջախել ցանքսի նախապատրաստության (մեքենաների, տրակտորների նախապատրաստություն, ձիերի գերացում և այլն) զեմ կազմակերպվող սարսոտաժը։ Միայն կուլակային քայքայիչ աշխատանքի դիմ անողոք պայքարելու, միայն մարտական կազմակերպվածությամբ և ցանքսին լավագույն ուժեր տրամադրելու, քաշող ուժը, մեքենաները, սերմացուն պատրաստելու և ցանքսի համար ձիերը խնամքով նախապատրաստելու միջոցով հնարավոր և կազմակերպել ցանքսի կարճ ժամկետերը։ Ձիերի հոգսը ցանքսին նախապատրաստվելու առաջնակարգ հոգսերից մեկն եւ կոլտնտեսային ձին կարեւագույն քաշող ուժ և ցանքսում և նախացանքսային աշխատանքներում։ Դրա համար ձիերի ուշադիր խնամքը ճիշտ կերպարություն, ժիշտ սականակին դիմում ուժում առաջ և ցանքսի ժամանակակի հոգսերից մեկը։ Ձիերին խնամելու գործում պետք է պայքարել սխալ խնամքի և կերպարման դիմ, զորովհետև անփույթ խնամքի ամենաչնչին վարմունքը որեցոր բարդվելով, զառնում և խկական կուլակային փասարարություն։

Այն հոդերը, վորանք ցանքելու յեն աօնանացան մօհկույթներով, Երանեան անպայման պետք ե մաերկեն մօյախոներից։ Աղոտաված ցելը, շարքահերկերից աղատված աղոտաված արտերը, ամրող խողանը ցանքսից առաջ անպայման պիտի հերկվեն։ Ըստ վորում վարի խորությունը կախում ունի վարելանողի վիճակից։ Շատ աղոտաված հողերը բոլոր դեպքերում պետք է հերկվեն խկական գութաններով։ Լայն ընդգրկող գործիքները, ցորենի գութանները, արորները, բուկերները կարելի յի գործադրել միայն այն գեպքում, յերբ ցելավոր և շարքահերկ արտերը քիչ են աղոտաված։ Իսկ յեթե ցելավոր և շարքահերկ արտերը բավականաչափ մաքուր են, ապա այդ գեպքում, առանց նախապես վարելու, կարելի յի թույլ տալ աշնանաբույսերի ցանքսն ուղղակի դիսկավոր շարքացաններով։ Կամ խոփավոր շարքացաններով՝ արտը նախապես տափանելով դիսկավոր կամ հասարակ տափանով։

Աշնանաբույսերի համար խողանի վարը հարկավոր և կատարել ինչքան կարելի յի շուտ—ավելի լավ և հենց հացի բերքահավաքից անմիջապես հետո։ Արածատեղիները պետք և վարել հենց հացարույսի բերքահավաքից առաջ, յերբ քաշող ուժն այնքան ծանրաբեռնված չի լինում, յերբ անասունը կարող է արածել խոտհնձից մնացած խոտով։ Իսկ բերքահավաքից անմիջապես հետո անցնել խողանի հերկմանը։

Վոչ մի կերպ չի կարելի թույլ տալ այսպիսի խայտառակ ցանքս վորպիսին տեղի ունեցավ 1932 թվին շատ կոլտնտեսություններում Հաճախ նկատվել եւ, վոր խողանում աշնանացան բույսերը ցանվել են բուկիերի և տափանի տակ: Հաճախ շարքահերկ գաշտերը նախապատրաստված չեն յեղել և բույսերը ցանվել են նաև շարքահերկ բույսերի աղտոտված դաշտերում, իսկ յերբեմն ելաշնանացան բույսերը ցանվել առանց նախապես շարքահերկ բույսերը հավաքելու: Աշնանացան մշակույթների հաստնանալու ժամանակ, 1932 թվին, արտերում հաճախ յերևան են յեկել գենազերչակի, յեղիստացորենի և արևածաղկի ցողուններ: Այս բոլոր գեղագիրում աշնանացանի բերքը չնչին և յեղել չենց դրա համար եւ, վոր 1932 թվին Յերկրկոմը, Յերկրգործկոմը և Յերկրհողվարչությունը քանից շեշտեցին աշնանացանից առաջ հողը լավ և խնամքով մշակելու անհրաժեշտությունը: Մանավանդ ցույց էին տրված շարքահերկ բույսերի բերքահավաքի մեքենայացման շարքահերկերի դաշտը ժամանակին աղատելու ձեերը:

Հյուսիսային Կովկասի Յերկրգործկոմի սլեհում ուղղակի մատնանշեց. «Կատենգորիկ կերպով արգելել խորհանտեսություններին, մեքենատրակտորային կայաններին և կոլտնտեսություններին ցանքսը կատարել ձգձումներով, ցանել այն արտերում, վորտեղից չեն հավաքված շարքահերկ բույսերը, ցանել չներկված խողանում, չներկված շարքահերկի աղտոտ հողերում և ուրիշ հասարակ յեղանակներով»:

Այս վորոշման մեջ արգելվում են աշնանացանի բոլոր անկուտուրական ձեերը, վորոնք սպառնում են բերքին:

Խորհանտեսություններում ու կոլտնտեսություններում նախացանքային նողամշակումն անց է կացվում սովորաբար բոլոր ուժերի լարվածության պայմաններում:

Գարնանը ուժերի չափազանց լարվածությունը առաջ եւ գալոց նրանից, վոր ցանքսի ժամկետերը կարծ են, իսկ աշնանը՝ նրանից վոր աշնանացանին նախապատրաստվելուն զուգընթաց՝ անհրաժեշտ լինում անցկացնել նաև մի շարք կարևորագույն գյուղատնտեսական կամպանիաներ: Սակայն լավագույն խորհանտեսություններն ու կոլտնտեսությունները աշխատանքը ձիցտ կազմակերպելու միջոցով կարողանում են զլուխ բերել բոլոր խնդիրները: Գարնանացանի համար հողի նախապատրաստումը չափազանց հեշտանում և աշնանավարի շընորհիվ, իսկ աշնանացանինը հեշտանում եւ յեկերը ժամանակին հերկերով, արածատեղերն ու խողանները ժամանակին վարելով, աշնանացանի համար շարքահերկերի դաշտն աղատելով, քաշող ուժը ձիցտ դասավորելու և աշխատանքը լավ կազմակերպելու միջոցով:

Հողի նախապատրաստում ուղղակի վորոշում և հենց ցանքսի հաջողությունը: Ինչքան լավ կազմակերպվեն նախացանքային աշ-

խատանըներն, ինչքան լավ նախապատրաստվի հողն, այսքան ավելի հաջողությամբ եւ աճում ու զարգանում ցանքսը: Ցանքափառ վարակը, ցանք ովագությամբ յիշ բերքը նույնպես կախում ունեն ուղղակի նախացանքային մասամբ: Հենց դրա համար ել հարկավոր է այնպես կազմակերպել նախացանքային աշխատանքները, վորպեսզի վողջ ցանքն ընթանակին յիշ հաջողությամբ,

ՄԵՐՄԱՑԱՆԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր գաշտային մշակույթ պահանջում և բույսերի վորոշ դասավորություն, վորոշ խսություն: Խորհանտեսությունների կոլտնտեսությունների պլազմիկայութեան համար նաև փորձակայանների կողմանակությունները: Այս հետագություններս սահմանված են ցորենացանի նորմաները: Այս նորմաները ցույց են տրված յերկրային կազմակերպությունների կողմից հաստատված ագրոմինիմումում:

Զանազան խմբի ռայոնների համար հիմնական մշակույթների վերաբերյալ սահմանված են սերմացանի հետեւյալ նորմաները:

Ռայոնների խումբ	Ցանքնահա- նումներ	Գույք	Դրամ	Աշխանցա- նումներ	Աշխանցա- նումներ	Աղատա- դադար	Ընդունա- վածումներ
Հյուսիսային-ա- րեկան ու- ժոններ (նախկին Դոնյան) . . .	1—1,15	1,1	1,1	1,0	0,15	0,3	1,15
Հյուսիս-արեկ- մոյան (նախկին Դոնյան)	1—1,2	1,2	1,2—1,3	1,1	0,15	0,3	1,2
Կենտրոնական և հարավային (նախկին Կու- րան)	1,2—1,25	1,4—1,5	1,4—1,5	1,3—1,4	0,15	0,82	1,25—1,5
Հարավ-արեկե- լյան հացահատի- կային (նախկին Սամարապոլ և Թիվերք) . . .	0,9—1,2	1,—1,3	—	—	0,15	0,3	1—1,4
Զափազանց չո- րային ռայոններ	0,7—0,9	0,8—1,0	0,9	0,8	—	0,3	0,8
Ինքնավար սարդ	—	1,4—1,5	1,4—1,6	—	0,15	0,1—0,15	1,0

Այս նորմաները ճշոված են յուրաքանչյուր ռայակի համար։ Պետք են նկատել վոր այս նորմաների պահպանումը բերքի բարձրացման համար կարևորագույն պայմանն է հանդիսանում։ Չե կարելի թույլ տալ անփույթ վերաբերմունք դեպի խիտ սերմացանը։ Զափից ավելի խիտ հացարույսերը շուտ վնասվում են արևազարկից։ Ցանցան հացարույսերը վնասվում են մոլախոտերից։ Այս բանը նկատվել ե մանավանդ 1932 թվին, յերբ ցանցան ցանքսերը հաճախ արտի աղտոտվելու և ցածր բերքի կարեռ պատճառներից մեկն են յեղել Շատ գեղքերում կոլտնտեսականների հետամնաց մասը, յենթարկվելով կուտակային տրամադրություններին, ինքն ևս անդիտակցաբար մասնակից մինելով կոլտնտեսային բերքի դեմ կուլակի մղած պայքարին, բաժանեց սերմացվի մի մասը և զրանով իջեցրեց սերմացանի սահմանված նորման։ Կոլտնտեսային բերքի դեմ տարփող այս կուլակային պայքարն անողոք հականարվածի պետք ե հանդիպի բոլոր դիտակից կոլտնտեսականների կողմից։ Սերմացվի պակասեցումը և շարքացանի սարքադրումը պետք ե կատարվին բըրգադների և լավագույն կոլտնտեսականների խիտ հակողությամբ։ Սա գեռ քիչ ե, անհրաժեշտ և ստուգի սերմացանը՝ ծերի դրության համապատասխան, իսկ ցանքսի վորակը վերջնականապես պետք ե վորոշել ծերի բանելուց հետո։

Աշնանացան մշակույթների սերմացանի նորման խոշոր չափով կախում ունի ցանքսի ժամկետներից։ Ինչքան ուշ, այնքան ավելի խիտ պետք ե ցանել մշակույթները։ Նա անհրաժեշտ և անել նրա համար, վոր ուշ ցանված մշակույթներն աշնանից չեն կարողանում թփակալել և չեն տալիս այնպիսի խիտ կանաչ, ինչպիսին տակիս են վաղ ցանվածները և գարնանը։

Ուշ աշնանացանների խոռությունը հատկապես կարնոր և այն ուայոններում, ուր աշնանացաններն ամենից ավելի հաճախ են վնասվում սահմանափներից և դուրս գալուց։

Հաճախ սերմացուն անփութորին ջոկերու և սերմացանի նորմային չետավելու պատճառով, արևածաղկի և մանավանդ, յեղիպատացորենի ցանքսերը ցանցան են լինում։ Դրա համար յեղիպատացորենի սերմացանի նորման պահպանելու վրա նույնքան մեծ ուշադրություն պետք ե դարձնել, ինչքան վոր սերմացվի ծրունակությունն ստուգելու վրա։

Սերմացու գողացողների դեմ անհաշելի պայքար մղելը, սերմացանի նորմայի վրա հսկողություն և ստուգում կազմակերպելը հանդիպուշացնող պայմաններից մեկը։

Ճիշտ սերմացանի համար մղվող պայքարի շուրջը մոքիլիքացիայի պետք ե յենթարկել բոլոր կոլտնտեսականներին, ցանքսին մասնակ-

տողներին։ Սերմացանի նորմայի պահպանումը բերքի բարձրացման կարեռ պայմաններից մեկն ե։

Այստեղ ավելի քան վտանգավոր են պարկերից, շարքացաններից կատարվող մանր գողությունները, վորոնք տեղի ունեցան անցյալ տարի։

ԱՐՏԵՐԻ ԽՆԱՄՄՔ ՆՈՒՅՆՔԱՆ ԿԱՐԵՎՈՐ Ե, ԻՆՉՔԱՆ ՏԱՆՔՍԵՐԻՆԸ

Փորձը ցույց ե տվել թե ինչքան կարեռ ե լավ ինսամքի միջուցվ ցանքսը մինչև լիակատար հասունացում, մինչև բերքի ստացում հացնելու գործը։ Խնամքն առանձնապես նշանակություն ունի շարքահերկ մշակույթների համար, վորոնք քաղանավում են։ 1931 և 1932 թվերին այն դաշտերը, վորոնք ժամանակին և լավ մշակվել եին շարքամիջերում և շարքերում, ավելի լիարժեք բերք—մինչև 30 ցենտներ յեղիպատացորեն, իսկ յերբեմն մինչև 50 ցենտներ, մինչև 15 ցենտներ արևածաղկեկ, մինչդեռ անխնամ թողած, մոլախոտերով ծածկված դաշտերում բերքը շատ չնշին ե յեղել։ Ահա թե ինչու բույսերի խնամքը մեծ նշանակություն ունի։

Յերբ հասկավոր հացարույսերը մոլախոտերով ծածկվում են, այդ գեղքում նրանց պետք ե ինսամել ձեռքի քաղնանով և տատասկի վերևի մասը գերանդիրով հնձելու միջոցով։

Աշնանացան հացարույսերի գարնան ժամանակ տափանելլ հաճախ մեծ ոգուտ ե տալիս։ Յեյլու փորձակայանի հետազոտությունները ցույց են տվել վոր ձմեռ ժամանակ լավ և անմիաս մնացած աշնանացանների տափանումը զգալիորեն ավելացրել ե բերքը, յեթե մի անգամ բաց ե թողնված ծանր տափան կամ յերկու անգամ թեթև տափան։ Էնտհակառակը, «Պուրս ցցվելուց» վնասված աշնանացանների տափանումը ոգուտ չի տվել։

Այդ իսկ պատճառով աշնանացանները պետք ե տափանել միայն այն գեղքում, յերբ աշնանացան դաշտի հողը կեղելով ծածկված ե, յեթե աշնանացանները ձմեռվա ցրտերից չեն վնասվել և բավականաչափ արմատացել են։ Թույլ ցանցան և դուրս ցցվելուց վնասված աշնանացանները տափանելու կարիք չկա։

Բայց յեթե աշնանացանների տափանումն ամեն ժամանակ ոգուտ չի տալիս, ապա գլխավոր շարքահերկ մշակույթների—յեղիպատացորենի, արևածաղկի, սոյայի, լորիայի ծերերի տափանումն ամենալայն չափով պետք ե կիրառվի։ Բանը նրանումն ե, վոր այս շարքահերկ մշակույթների ծերերի տափանումը թույլ ե տալիս յերկարածելու քաղնամիջությունների ժամկեւերը։ Մեր յերկրամասի կոլտնտեսու-

թյունների 3 տարվա աշխատանքի փորձը ցույց ե տվել, վոր շատ կոլտնտեսություններ ուշացնում են շարքահերկ մշակույթների առանձին քաղանքներ: Այս դեպքում դաշտն արագությամբ ծածկվում ե մուլտտերով, և ծերի բաներոց 2—3 շաբաթ հետո շարքահերկ դաշտը վերածվում ե զանազան մոլախոտերի վայրենի թփուտի: Այս դեպքում ցանված բույսերը թույլ են զարգանում, մոլախոտերով խեղզված ծերը գեղնում և թոշնում են: Այսպիսի ծերը ուշացած քաղհանից հետո վատ են զարգանում, դանդաղությամբ են կազզուրվում և, ընդհանրապես, հետագա ամենալավ ինամբն անդամ չի կարողանում վերջնականացնել բարելավել շարքահերկ բույսերի դաշտը:

Ահա թե ինչու պետք ե ծերը տափանել այն բոլոր գեպերում, յերբ հնարավոր ե առանձին քաղանքնի ուշացումը: Յեթե շարքերը լավ են պատրաստված, այդ դեպքում յեղիպտացորենի, սոյայի՛ արեածարկի ծերի տափանումը նկատելի վաս չի հասցնում ծերին: Սակայն այս տափանումը լուծում ե մի շարք կարեռագույն խնդիրներ, թեթեվացնելով հետագա քաղհանը և յերկարածելով առաջին քաղհանի ժամկետերը: Տափանումը վոչչացնում է անձրենից հետո դաշտի մակերեսի վրա գոյացած կեղեվը: Տափանումը վշացնում է ցանքսից հետո աճած մոլախոտերի մանր բողբոջները: Տափանումը, դուրս քաշելով թույլ ծերի մի մասը, հեշտացնում ե բույսերի նոսրացման հետագա աշխատանքը: Տափանումն անցկացնելու դեպքում, մոլախոտերով խեղզվելու այնպիսի վտանգ չկա, ինչպիսին լինում է շտափանած դաշտերում: 1931 թվին շատ կոլտնտեսություններ տափանելու շնորհիվ եր միայն, վոր աղաստվեցին քաղհանի դժվարություններից, վորովհետև տափանումը յերկարացրեց առաջին քաղհանի ժամկետը և հնարավորություն տվեց քաղհանելու բոլոր շարքահերկ բույսերը, առանց թույլ տալու, վոր նրանք մոլախոտերից խեղզվեն:

Տարբահերկ բույսերի իսկական ինամբն սկսվում ե հենց նրանց տափանումվ: 1930 և 1931 թվերին չքաղհանված շարքահերկ դաշտերի բերքի հսկայական անկումը ամենալավ համոզեցուցիչ միջոցն ե, թե ինչքան կարևոր ե քաղհանի նշանակությունը: Քաղհանը պետք է անցկացվի ժամանակին: Հենց վոր շարքահերկ մշակույթների համար շարքեր գծվեն, խսկույն պետք ե սկսել քաղհանը:

Քաղհանը կատարվում է ձեռքի գանակներով, ձիաքարը թորիսերով և տրակտորաքարը թորիսերով: Ամենահաջող քաղհանը տրակտորներով ե կատարվում: Բավականաչափ հաջող աշխատում են ձիաքարը թորիսերը, Դանակներով կատարվող քաղհանն ամենալավաղն ե:

Պարզ ե, վոր յուրաքանչյուր խորհութեան կոլտնտեսություն և մեքենատրակտորային կայան առաջին հերթին պետք ե ոգտագործեն տրակտորաքարը թորիսերը: Սակայն այս թորիսերը քիչ են:

Դրա համար անհրաժեշտ ե ձիաքարը թորիսերը կցել տրակտորներին: Եաւ խորհութեան թույններ և մեքենատրակտորային կայաններ հաշողությամբ են կատարել շարքահերկ բույսերի քաղհանը միայն նրա համար, վոր ոգտագործելով տրակտորային արորները, նրանք շարքացան մեքենաներին հարմարեցրին քաղհանիչ թաթիկներ և սրանով ալահովեցին իրենց քաղհանին թաթիկներով: Մրան զուգընթաց, անհրաժեշտ ե լայն չափով կիրառել նաև ձիով հերկումը: Չի կարելի նույնպես թերագնահատել ձեռքի քաղհանը: Ցուրաքանչյուր խորհութեան սուլթյան ու կոլտնտեսության մեջ, նայած շարքահերկ մշակույթների ցանքսատարածության, պետք ե կազմվի քաղհանի աշխատանքների պլան, վորտեղ ճշտիվ հաշվի առնվիճ դրոժիքներով քաղհանելու հնարայական բանական բանը, և ապահովիքն բանվիճ ձեռքերի բավականաչափ քանակություն այն հաշվով, վոր քաղհանը վորակապես լավ կատարվի և ավարտվի ճիշտ սահմանված ժամկետերին: Տարբամիջերի քաղհանը կատարվում է ամուսնը 2—3 անգամ, նայած յեղանակին և հողամասի աղոտոված լինելուն: Քաղհանների միջև ժամանակի տարածությունը լինում է սովորաբար 15—20 որ:

Տարբահերկերը քաղհանելուն զուգընթաց, անհրաժեշտ ե նաև հեռացնել շարքերի մեջ բանած մոլախոտերը: Տարբերում քաղհանը սովորաբար կատարվում է ձեռքով: Այս աշխատանքը կատարվում է բույսերի նոսրացման հետ միաժամանակ: Խոշոր խորհութեան սուլթյուններում և կոլտնտեսությունների մեջ ցանքսատարածություններում այս աշխատանքը նույնպես պետք է կատարել տրակտորների ոգնությամբ:

Վորպեսզի շարքերում հնարավոր լինի ապահովել ծերի նոսրացումը և քաղհանը, դրա համար հենց նույն արորների հետ միասին գործի յեն դնում տրակտորները շարքահերկ բույսի շարքերի խաչաձև ուղղությամբ: Խոփիկները և թաթիկներն այս գեպում այնպես պետք է դասավորվեն, վոր նրանց մեջտեղ բույսերը չմասավեն—չկոտրատվեն վորոշակի սահմանված տրաբամության վրա: Նոսրացումը տրակտորներով պետք է կատարել մի անգամ, վորակազի յերկրորդ նոսրացման ժամանակ բույսերը չափից ավելի չնոսրացման—չկտրվեն: Յեթե պետք լինի յերկրորդ անգամ նոսրացմանը կատարվում է դասակներով: Մեծ մասամբ շարքահերկ բույսերը նոսրացման են մի անգամ (յեղանաշտորեն, արևածաղիկ, գենադերչակ):

Քաղհանի ժամանակ անհրաժեշտ ե լրիվ ոգտագործել կոլտնտեսության ունեցած բոլոր ուժերը: Այդպես ել հենց անում են առաջանակ վոր կոլտնտեսությունները, վորոնց դեկավարները, հենվելով ակտիվի վրա, քաղհանի աշխատանքում ներգրավում են բոլոր աշխատունակ-

ներին: Ընդահակառակն, այն կոլտնտեսություններում, վորտեղ կուրակը, յենթակուլակը ազատ, համարձակ գործում են և ռամեն կերպ աշխատում են քայլայել աշխատանքային կարգապահությունը, սովորեցնում են աշխատել վոչ թե իրենց սեփական տնտեսության, այլ ոտար տնտեսության համար, սովորեցնում են քիչ և վատ աշխատել» (ընկ, Շերովակի ճառից), այնտեղ քաղջանին դուրս են գալիք աշխատունակ կրտսեսականների չնչին մասը: Այսպես ե յեղել նեղամակայա, թիսկորբնայա ստանիցաներում, այսպես ե յեղել նաև կուրանի մի շարք ստանիցաներում, իսկ աշխատանքի դուրս յեկողներից վոչ բոլորն եյին բարեխողորեն աշխատում:

Պարզ ե, վոր այսպես աշխատելով, չեր կարելի շարքահերկ բույսերի վերաբերյալ աշխատանքները գլուխ բերել և պետքին պես քաղջանել: Քաղջանին այսպես վերաբերյիլուն վերջ պետք և տրվի: Խորհրդ, իշխանությունը թույլ չի տալիս այլևս կուրանի հողն աղտոտել վոչ կուրակության և վոչ ել սպիտակ բանակայինների մնացորդներով, վոչ ծույլերով, պարագիտներով, վորոնք գորդանում են կոլտնտեսային բերքը: Միայն բոլշևիկյան կազմակերպվածությամբ՝ միայն դասակարգային թշնամու վրորդայթների գեմ անողոք պայքարելով, բոլոր ուժերը քաղջանի շուրջը մորթիկացիայի յենթարկելով, միայն մեքենաների լրիվ և ճիշտ ոգտագործումով հնարավոր և ժամանակին մշակել շարքահերկ բույսերն այնտեղ, ուր շարքահերկելը ցանքսերում մեծ տեղ են գրավում:

ԺԱՄԱԿԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԲԵՐՔԱԿԱՎԱՐԾ ԿԱՆԽՈՒՄ Ե ՎՈՐՈՒՍՑՆԵՐԸ

1931 և 1932 թվերին մի քանի խորհունտեսություններ և կոլտնտեսություններ կորցրին բերքի զգալի մասը լոկ այն պատճառով, վոր ձգձեցին բերքահավաքը, հարկ յեղած չափով չպահպանեցին բերքը հափշտակություններից: Հաճախ հացաբույսերի բերքահավաքը սովորական ժամկետերի դիմաց մի մասով ձգձվեց: Մի քանի դեպքերում շարքահերկ բույսերը հավաքեցին ձյան տակից: Պարզ ե, վոր այս աստիճան ուշացումն առաջացնում է զգալի կորուսներ:

Բերքահավաքի կամպանիան կարենը և նենց նրա համար, վոր կազմակերպված բերքահավաքը կարող է զցել վողջ ազբոտեխնիկայի հրաշալի հացարույս, բայց վոչ թե սոցիալիստական պետության, կուտնտեսության համար, այլ զաշտային միների, պոնտական միների, ծույլերի և պարագիտների համար: Դրա համար յուրաքանչյուր կոլտնտեսություն և խորհունտեսություն մեծ լարգածությամբ պետք է ամփապատրաստվի բերքահավաքին, պատրաստի ինքնտարը, քաշող

ուժը, ճիշտ կազմակերպի բրիգադներն այն հաշվով, վոր ամենահարճ ժամկետին հավաքի հասունացած մշակույթները և բերքն ամբողջովին պահպանի հափշտակումներից և փչացումներից:

Սակայն բույսեր հավաքելը չի նշանակում արմատից կտրել և թողնել դաշտում: Հավաքել—դա նշանակում է դուրս բերել ընթքը և այն հացնել այնպիսի դուրս բերյան, վոր պատրաստի մթերքը (հացահատիկ, արեածաղկի սերմ, ճփկնդեղ, գետնախնձոր) ուղարկվի եկեղակատոր, շտեմարան, գործարան: Հենց նույն 1931 թվին քիչ չեն յեղել այնպիսի դեպքեր, յերբ հնձված հացարույսները, քանդված գետենախնձորը մնացել են դաշտում և մինչև եկեղակատորը, պահեստը, շտեմարանը հասել են ահապին կորուսներով: 1931 թվին արեածաղկի խոշոր կորուստները, գլխավորապես, հետևանք են յեղել այն բանի, ուղղող կորուստները, գլխավորապես, հետևանք են յուրց տվյալ բերքի պահպան անպատճանատու վերաբերմունք են ուղց տվյալ բերքի պահպանմանը—արեածաղկի կտրված հասկերը յերբեմն դեռ ու դեռ թափանականը—արեածաղկի կտրված հասկերը յերբեմն դեռ ու դեռ թափանականը—արեածաղկի կտրված հասկերը յերբեմն դեռ ու դեռ թափանականը—արեածաղկի կտրված հասկերը, մինչև առաջին ցըր տերը:

Յուրաքանչյուր խորհունտեսային բանվոր, յուրաքանչյուր կուտնտեսական, պարզորեն գիտակցելով ժամանակին և ինսամքով կատարվող բերքահավաքի նշանակությունը, անողոք պայքար պետք և այստարաբեն կորուստների և հափշտակությունների գեմ, պատասխանայի մարտական լողունգները, վորոնց իրագործման համար կամպանիայի ազգային կուտնտեսությունների բանվորները, կուտնտեսություն և պայքարեն խորհունտեսությունների բանվորները, կուտնտեսականները և ազգությունների պատճառով:

Բերքահավաքը ժամանակին և լավ կատարելով, վոչ մի դեպքում թույլ չպետք և տալ բերքի խայտառակ շապալում: Խորհունտեսության յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր կուտնտեսական սության պահպան բերքահավաքը խնամքով կատարելու համար պատասխանատու յեն բերքահավաքը խնամքով վերաբերմունքը գեղի Այդ իսկ պատճառով բրիգադիների անփույթ վերաբերմունքը գեղի անմարդի խայտառակ և գատական պատասխանական վերաբերավը պետք և համարվի կարանյակները կարող են լակության պոչերը, միայն դասակարգային թշնամիները կարող են յուրախանակ կորուստներով: Միայն կուլակի արբանյակները կարող են ուղարկություն գիտել դաշտում վոչնչացվող բերքը: Խորհունտեսական սության ամեն մի բանվոր, ամեն մի կուտնտեսական, վորը կանգնած ուղարկություն կրի և զգա յուրաքանչյուր հասունացած հասկերը, յուրաքանչյուր գետնախնձորի թվի, արեածաղկի ամեն մի հասկերի համար, քանչյուր գետնախնձորի թվի, արեածաղկի ամեն մի հասկերի համար,

վորպես սոցիալիստական սեփականության համար և պահպանի այդ բերքը կորստից, հափշտակությունից ու շռայլումից:

Յուրաքանչյուր կոլտնտեսական անողոք պայքար պետք է մղի կոլտնտեսային բերքը հափշտակողների և գողացողների դեմ: Մի՞թե այն կոլտնտեսականը, վորն ուշաղըություն չի գարձնում այն բանի վրա, թե ինչպես պարագիտներն ու գողերը գիշեր ու ցորեկ գողանում են կոլտնտեսության բերքը, և մի՞թե գրանով նա չի ոգնում դոդերին՝ գողանալու թե պետությունից և թե հենց իրենից:

Մի՞թե Ռուսակերմաշի և Ստալինդրապի տրակտորային գործարանների բանվորները թույլ կտան, վոր գործարանի բակը վերածվի քանդված մեքենաների գերեզմանոցի, վորոնք անպետք են լոկ այն պատճառով, վոր նրանք անխնամ կերպով են սարքված կամ պատրաստված են անվորակ մասներից:

Թույլ կտա արդյոք վորևէ կոլտնտեսուհի, վորպեսզի պատրաստված հացն այնքան մնա վաւարանում, վոր ածուխ դառնա և բոլորովին վոչչանա: Վաչ սա միանգամայն անհանդուրժելի յե,—կասի ամեն մի գիտակից կոլտնտեսականը:

Յեկ մի՞թե դաշտում աճած հացահատիկի, արևածաղկի, գետնախնձորի, ճակնդեղի, բամբակի, ծխախոտի կորուստներն այսպիսի անիւ մաստ կորուստներ չեն:

Պոլտավսկայա ստանիցայի (Կուբան) «518» կոլտնտեսության մեջ, յեկիպտացորենի յերկրորդ բերքահավաքը տվեց այնքան բերք, վորքան վոր տվեց առաջին բերքահավաքը: Նեղամայելվակայա ստանիցայի կոլտնտեսություններում յեկիպտացորենի բերքահավաքը նույնապես կատարվեց մի քանի անգամ: Այնպես վոր յուրաքանչյուր անգամ իր թե մաքուր, իսկ դրա հետ մեկանեղ նաև վերջին, յերրորդ բերքահավաքը տվեց 1 հեկտարից մինչև մի ցենտներ բերք: Այսպիսի յերեկույթը նկատվել են նաև ուրիշ զատ կոլտնտեսություններում: Այսպիսի խայտառակ բերքահավաքը այլ կերպ չի կարելի բացարեկ քանի կուլակային վասարաը վերաբերմունք դեպի կոլտնտեսային բերքը: Մի քանի կոլտնտեսականներ առաջին քաղանից հետո իրենց սեփական հողերում յեկիպտացորենի վոչ մի հասկ չթողեցին, իսկ կուրփացին յաշտերում, կուլակի ազգեցությամբ, յեկիպտացորենը հաղունների վրա կամ փոքր և ցրված դեղերում:

Չատ կոլտնտեսություններում հացի կրկնակի կարումը նույնապուղին են տալիս: Սանուցնակի կուլակային աշխատանքի մասնակին խորհրդացին, կուսակցական աշխատաղների, դյուլական կազմակերպությունների դասակարգային կուրության արդյունքն են:

